Սիմոն Զաւարեան

Սարգարէն

Սարգարէն

Սիմոն Զաւարեան

1865-1913

«Պիտի յիշե՞ս նրան, հայ ժողովուրդ, – չգիտեմ։ Մարդկութիւնը այնքա՜ն մոռացկոտ է։ Բայց նրա համար – միեւնոյն է։ Նա չէր տանում պերճանք ու երախտագիտութեան ցոյցեր՝ իր կեանքի ընթացքում։ Դրանք բնաւ պէտք չեն նրան եւ այժմ, մահից յետոյ»։

Ազգային, կուսակցական գործիչ Յակոբ Զաւրեանի (Զաւրիեւ) այս խօսքերը, կարելի է համարել սոյն գրքոյկի պատրաստման «դրդապատճառը»։ Հայ ժողովուրդը կը յիշէ՞ այսօր, որ Զաւարեան ունեցած է, թէ՞ յիշեցնելէ առաջ, պէտք է կրկին եւ կրկին ծանօթացնել ժողովուրդին իր պատմութիւնը կերտող «Մարգարէ»ներուն հետ։

Ահա, Զաւարեանի մահէն 107 տարիներ ետք, մենք կը շարունակենք ժողովուրդը ծանօթացնել Զաւարեաններու կենսագրութեան, նկարագրին, կերպարին, կրած արժէքներուն, որոնք 19-րդ դարու վերջերուն գործի վերածուելով, հայ ժողովուրդի ազատագրական պայքարի զարթօնքը շեփորեցին։ Այո՛, այս կենսագրութիւնները համայն ազատատենչ մարդկութեան կը պատկանին, սակայն հայ ժողովուրդը պէտք է տէ՛րը դառնայ, իւրացնէ եւ օգտուի այդ գաղափարական աղբիւրներէն եւ մկրտէ՛ սերունդները անոր «ջուր»երով, եթէ չուզեր ծառաւիլ Հայրենիքի եւ Ազատութեան։

ՀՅԴ Հանրային Կապերու Գրասենեակ
Հոկտեմբեր 2020

Բովանդակութիւն

-Մանկութեան Յիշողութիւններէն.....էջ 1
Սիմոն Զաւարեան

-Խարազանող Մարգարէն.....էջ 8
Յակոբ Զաւրիեւ

-Ընկերոջ Յիշատակին.....էջ 18
Վարդան

-Զաւարեանի Հոգին.....էջ 22
Սիամանթо

-Սիմէօն Զաւարեան (Յիշողութիւններ).....էջ 24
Յ. Արղութեան

-Զաւարեանի Աչքերը.....էջ 32
Յ. Վանեան

-Սիմէօն Զաւարեան. Կենսագրական Ակնարկ.....էջ 34
Արամ

-Մարգարէն. Սիմոն Զաւարեանի Անմեռ Յիշատակին.....էջ 44
Իշխան

-Շարժինք. Անզուգական Զաւարեանի Մահուան Առթիւ....էջ 46
Վ. Արծրունի

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

«Դրօշակ». Հոկտեմբեր 1927, Թիւ 10 (269)

Այս յիշողութիւնները Ս. Զաւարեանը գրի էր առել Պոլսում, «Ազդակ» շաբաթաթերթի համար, բայց ժամանակին չէր հրատարակել։ Մի հրաշքով չի կորել եւ փրկւել է «Ազդակ»-ի թղթերի մի մասի հետ։ Անգին բեկոր է, որ Սիմօնի յուշերի մի ուրիշ կտորի հետ՝ տպած «Հայրենիք»-ի 2-րդ բացառիկ թւում անփոխարինելի նիւթ է կազմում Դաշնակցութեան անզուգական երրորդութեան անդամներից մէկի կենսագրութեան համար։ Գրւածքը հրատարակում ենք առանց որեւէ փոփոխութեան։ «Դրօշակ»

Չեմ յիշեր ճիշտ, բայց կարծեմ 1875/6-ի ձմռան մէջ էր, երբ առաջի անգամ ես լսեցի Ռաֆֆիի եւ Արծրունիի անունները։

Իմ ազգական Բ. Շահվէրտեանը – որի մօտ ես կապրէի ու կը կրթւէի – լինելով Ներսիսեան դպրոցի ուսուցիչ, երեկոները կնոջ հետ միասին կը վարէր ռուսաց մի թերթի («Տիֆլիսկի Վեստնիկ») սրբագրիչի պաշտօն։ Եւ որովհետեւ Շահվէրտեանի կինը՝ Մ. Ա. Նադեժդինան ռուս էր – ինձ շրջապատող մթնոլորտը կը ներկայացնէր միջազգային մի պատկեր, այն ժամանակայ գրական-քաղաքական գաղափարական դէմքերէ։

Շահվէրտեանը, իր հետ քաղաքական ամուսնութեամբ կապւած Նադեժդինան շատ ուրիշների հետ միասին հեռացւած էին Պետերբուրգի համալսարանէն, իբրեւ համակիրներ Պիսարեւի, Չերնիշեւսկու եւ այլ ռուս արմատականների։ Ուրիշները նոր էին վերադարձած Ցիւրիխէն, Զուիցարիայէն, Փարիզէն իրենց հետ բերելով Լասսալի, Մարքսի, Բակունինի հովերը։

«Ինտերնասիոնալի», «նիհիլիզմի» – անհատի, ազգերի, Մարդկութեան ազատագրութեան հովերն էին, որ կը փչէին շրջապատողներիս վրա՝ տղամարդ թէ աղջիկ՝ ռուս, հայ, վրացի, թուրք, նոյն իսկ չերքեզ, լեհ...

«Ազգութեան» խնդիր չը կար մէջտեղ։ Բոլորին էլ կը կապէր ռուսաց լեզուն։ Այսուհանդերձ տեղական լեզուները խորշւած չէին։

Վրաց «Մորրիս Արագին» նոյնչափ ոգեւորութեամբ կ'երգէր միջազգային այդ հաւաքոյթների մէջ, որչափ եւ հայ «Ծիծեռնակը», ռուս խմբերգին կը յաջորդէն Մարսելիէզը, լեհ ապստամբ-

ների «Ըզ դիժում պոմարա»...

Ոմանք այդ շրջանի անձերից կորան անյայտութեան մէջ, բայց շատերը թողեցին անջնջելի հետքեր։ Ռուսներից Իվանովները հիմնեցին Թիֆլիսի մէջ *առաջի* հասարակական գրադարանը, Սիմօնովիչները կը պահէին նոր ֆրէբէլեան սիստեմով բացուած մանկական պարտէզ։ Վրացիներից Գօգոբաշվիլին – ռուս մանկավարժ Ուշինսկու հետեւողութեամբ կազմեց վրացերէն «Մայրենի Լեզուն», վրացերէնի թարգմանեց «Ծիծեռնարկը»։ Նիկոլաճէն դարձաւ յայտնի հրապարակախօս։ Հայերից – Շահվէրտեանը, Յարօն, Արծրունու հետ միասին հիմնած էին ազատական «Մշակ»-ը եւ կը պայքարէին պաշտպանողական «Մեղու Հայաստանիի» դէմ։ Դրանց մէջ էր եւ Իզմայլօվը, որ տարիներ յետոյ դառնալով Թիֆլիսի քաղաքագլուխ երկար եւ յախուռն պայքարից յետոյ քաղաքի վարժարանները յաջողեցրեց բաժնել *ազգայնական* սկզբունքի համեմատ՝ ռուսական, հայկական, վրացական, թուրքական... Սիրուած էին այդ շրջանի մէջ մանաւանդ ամուսին Զմշկեանները եւ մանաւանդ թիւրքահայ Ամերիկեանը, որ հիմք էին դրած հայկական թատրոնի։ Ամերիկեանի կազմած երգիծաբանական կուպլէտները, մանաւանդ, մեծ ընդունելութիւն էին գտած այդ միջազգային շրջանի մէջ։ Կը յիշեմ շատ լաւ կերպով, որ ընկերական հաւաքոյթներից շատերը կը վերջանային Ամերիկեանի

«Էսենց է, մոտա է,
Մոտա է, մոտա է»...

Զարթ, բայց կծու շեշտերով, որուն կը ձայնակցէինք մեծերու հետ միասին նաեւ մենք, մանուկներս։

Ես դեռ շատ փոքր էի (7-8) տարեկան, որպէս զի հասկանայի այդ շարժման բնոյթն ու կարեւորութիւնը... Յամենայն դէպս այդ օրանէն երեւի զգացի ազգային շովինիզմի եւ ատելութեան անհեթեթութիւնը, սորուեցի հասկնալ որ բոլոր ազգերի մէջ էլ կան լաւ մարդիկ, բոլոր լեզուներն էլ ունեն իրենց գեղեցիկ արտայայտութիւնները...

Կեանքը առաջ էր բերած, սակայն, հարցեր ու խնդիրներ, որոնց հանդէպ երիտասարդ շրջանը շուտով բաժնուեց տարբեր հոսանքների։ Տասնեակ տարիներ յետոյ միայն իմացայ, որ Շահվէրտեանը, Յարօն (եւ կարծեմ Իզմայլօվը) չէին համաձայնած Արծրու-

նիի «բուրժուական» եւ «նեղ ազգայնական» ուղղութեան հետ եւ բաժնուած էին «Մշակ»-էն։ Ես անտեղեակ էի այս պաղութենէն, ոչ էլ կը կարդայի «Մշակ»-ը, սակայն չը գիտեմ ինչու, ինձ վրա ազդած էր «Մշակ» խօսքը։ Կարծեմ կը զարմանայի որ «ամենացած» եւ արհամարհած մարդոց անունով կնքած էին թերթի անունը։ Գուցէ առաջի անգամ տպաւորութիւն էր գործած խօսքի կարճութիւնը (բաղդատմամբ երկար «Մեղու Հայաստանի»-ի հետ)։ Եւ որովհետեւ մանկութենէ ես մի փոքրիկ հակում ունէի դէպի նկարները, մանաւանդ որոշ ձեւերը, մի օր պարապութեանս ատեն «Մշակ» գլխագրէն արտանկարել եւ կտրել էի այդ չորս տառերը (իրենց իսկական ձեւով ու մեծութեամբ) կապոյտ մի թերթի վրա, ծածկել էի կտրուած տեղը թափանցիկ դեղին թղթով եւ փակցուցել այդ անպաճոյճ զարդը սեղանիս դէմ եղող լուսամուտին։

Չեմ մոռանար այն հեգնական ծիծաղն ու բացականչութիւնները որ լսեցին քանի օր յետոյ աթոռիս ետեւէն.

– Տես, տես – կը կանչէր ազգականս Յարօին եւ կնոջը, Արծրունին երեւի շատ կուրախանայ որ մեր Սիմոնը գնահատել է իր թերթը...

Դաստիարակիս հեգնական շեշտը ազդեց երեւի որ ես առանձին ուշադրութիւն դարձրի «Արծրունի» անուան վրա։ Եւ երբ մի քանի շաբթից թէ ամսից յետոյ մի ինչ որ տոմսակով ինձ ուղարկեցին Արծրունու մօտ, ես առանձին հետաքրքրութեամբ դիտեցի վերջինիս դռան վրա փակցուցած այցեկարտը եւ տպաւորուեցի «տօկտօր փիլիսոփայութեան» մակագրութեամբ։ «Փիլիսոփայութիւնը» մի քիչ վախեցրեց ինձ։ Եւ երբ մի րոպէից յետոյ լսեցի տոմսակի բովանդակութեան առթիւ Արծրունու տուած չոր բացասական պատասխանը – ես երկար ժամանակ կը մտածէի արդեօք բոլոր «փիլիսոփաները» այդպիսի անճոռնի մէջք, այդպիսի խոժոռ դէմք եւ չոր արտայայտութիւն ունեն։

Ակամայից յիշեցի համակրելի Զմշկեաններին, Գօգեբաշվիլոն եւ մանաւանդ Ամերիկեանին եւ իր ուրախ զարթ.

«Էսենց է, մօտա է,
Մօտա է, մօտա է»-ն։

Անցան մի քանի տարիներ. Ներսիսեան դպրոցէն ես փոխադրուած էի պետական ըէալական գիմնազիօնը, աւելի ռուսական մթնոլորտ, բայց կը շարունակէի ապրել ազգականիս շրջանին մէջ...

Պայթեց ռուս-թուրքական պատերազմը։

Մուխտար փաշայի, Տէր Ղուկասովի, Լօրիս Մելիքովի անուն-

ները կ'արտասանէին ամէն կողմ. կ'երգէին փողոցային երգերի, թռուցիկների, թերթերի մէջ, տանը խօսակցութեան ժամանակ, թերթի սրբագրութիւնները կատարելիս:

Մի մի անգամ սրբագրութիւնների ատեն ես կ'օգնէի դաստիարակիս, հետեւելով տպագրած նիւթերին, որոնցից արտատպութիւններ կը կատարուէին: Կը ջոկէի Ֆրանսական «Temps»-ը անգլիական «Times»-էն, գիտէի որ «Գոլոս», «Daily News»,– ազատական թերթեր են, իսկ «Նովոիէ Վրեմիան» եւ «Times», – «Figaro», – պահպանողական:

Պատերազմի ատեն վերաւորների եւ գաղթականների օգտին կազմակերպած հանդէսների մէջ պատկերներ կը ցուցադրուէին «հայրենասիրական» զգացումները բարձրացնելու համար: Ինձ վերայ մասնաւորապէս ազդեց Ալաշկերտի գաղթականների փախուստը ներկայացնող մի պատկեր, որ կը հալածուէր բաշի բօզուկների կողմէ... Երեւի այդ ծանր տպաւորութեան տակ էր որ միւս թէ երրորդ օրը փողոցի մէջ թուրք գերիներ պատահածս ատեն սկսեցի նախատել, հայհոյել անոնց: Խեղճերը ոչինչ չը պատասխանեցին եւ միայն տխուր հայեացքով կը դիտէին փոքրիկ «գեավուրին», գուցէ մի քիչ էլ ակնածելով իմ փայլուն համազգեստից...

Պատերազմի ժամանակ եւ յետոյ ազգականս շրջապատող միջազգային մթնոլորտը կստանար աւելի ազգայնական գոյն: Գուցէ պատճառը նա էր որ ազգականիս կինը, որ թէ մօր թէ դաստիարակչուհու դերին մէջ էր իմ նկատմամբ, ամբաստանելով իբրեւ յեղափոխական – բանտարկած եւ փոխադրուած էր Պետերբուրգ, իբրեւ մէկը այն 193-ից, որոնց դատը այնպիսի մեծ աղմուկ հանեց Ռուսաստանի պատմութեան մէջ:

Աւելորդ է ըսել թէ ինչ ծանր տպաւորութիւն պիտի թողնէր այդ բանտարկութիւնը իմ մանկական զգացմունքների վրա: Բարեբախտաբար, Մարիա Ալեքսանդրովնան (այդպէս կը կոչէին վարժուհուա) – իբրեւ սոսկ *քարոզիչ* ընկերվարական սկզբունքների ազատուեց եւ մէկ տարուց վերադարձաւ Թիֆլիս:

Պետերբուրգի մէջ նա առիթ էր ունեցած ծանօթանալու եւ մօտ շփուելու Խորէն Նարբէյի հետ: Իբրեւ լաւ ֆրանսագէտ ան կը գնահատէր մանաւանդ Խորէն Նարբէյի ֆրանսերէնը, բայց հետաքրքրուած էր նաեւ հայկական հարցով: Վերջինիս մասին ես բնականաբար չ'ունէի ոչ մի գաղափար, ռուսաց գիմնազիօնի մէջ սկսած էի նոյն իսկ մոռնալ հայերէնը, կը կարդայի միայն ռուսե-

րէն մանկական գրքեր...

Իմ ուսուցման այդ շրջանի մէջ էր, երբ ազգականիս շրջանի մէջ երեւաց մի նոր անձնաւորութիւն։ Դա մի կարճահասակ, բայց կրթած, զարճախօս թիւրքիացի հայ էր, որ եկած էր ինչպէս կըսէին Եգիպտոսէն։ Վարժուհուս, ռուսների հետ ան կը խօսէր ֆրանսերէն, հայերի – թրքահայ բառբառով եւ շատ արագ կերպով որ անվերջ սրախօսութիւնների տեղի կ'ուտար։ «Քէշկէքը» – այդպէս կ'անուանէին բոլորը, Փարիզ սորուած եւ Եգիպտոսէն եկած հայուն – մտերմացաւ նաեւ ինձ հետ։ Իր զարճալի պատմութիւններէն զատ ես կը հետաքրքրուէի իր բարձր ծալտող գլխարկով ամեն անգամ ծալելով տափակցնելով զայն եւ նորէն բանալով... Քէշկէքի «չապօ կլակը»...

Մի անգամ մտնելով տուն Քէշկէքը գտաւ ինձ մենակ, հետաքրքրուեցաւ իմ դասերով, ընթերցանութեանս գրքերով եւ... ուրախ տօնը յանկարծ փոխեց լուրջի, նախատականի։

–«Ծօ, դու հայ գիրք չես կարդար, ծօ, դու հայ չես», ազդեցին վրաս, եւ ոչ այնքան իրենց բովանդակութեամբ, որչափ այն զգացած տօնով, շեշտով, որ կար հայրենասէր հայու մէջ։

Միւս օրը «Քէշկէքը» բերեց ինձ Ռոբինզօնի հայերէն թարգմանութիւնը որ կարծեմ նոր էր դուրս եկած...

Քիչ յետոյ ուշադրութիւնս գրաւեց «Մշակ»-ը... Բոլորովին պատահմամբ աչքս ընկաւ «Ջալալէդդին» վերնագրի վրա, որ եւ սկսեցի կարդալ։ Անկից յետոյ «Մշակ»-ին, Ջալալէդդինին եւ Ռաֆֆի ստորագրութեանը կսպասէի անհամբերութեամբ...

Ջեմ մոռցած որ յափշտակած հայ հարսերի կրակի շուրջ կազմակերպած պարը թողեց վրաս ցնցող տպաւորութիւն։ Առջի անգամ էր, կարծեմ, երբ իմ փոքրիկ մանկական սիրտը կսկծաց հայրենասիրական ու վրէժինդրութեան զգացմունքներով...

Այդ ամառ, մեր բնակած տան բագի մէկ անկիւնը ես յատկացրած էի փոքրիկ, շատ փոքրիկ բանջարանոցի... Ցանած էի վարունգ, եգիպտացորէն, պատատէս, ֆասօլիա։ Պարտէզի ամբողջ հոգսը՝ փորփրելը, ջրելը ինձ վրա էր, որ կը կատարէի մեծ գոհունակութեամբ, իբրեւ ամենամեծ զարճութիւն։

Չը գիտեմ ինչպէս եղաւ, բայց ցանածս բոլոր բոյսերէն պը-տուղ տուեց միայն ֆասօլիան։ Երբ մի օր տանեցիք որոշեցին իմ բուացրած ֆասօլիայով կերակուր պատրաստել եւ մի քանի հիւրեր հրաւիրել – վերջիններիս մէջ էր (կարծեմ իմ ցուցմունքով) նաեւ Քէշկէքը...

Քիչ յետոյ մեր տան մէջ գումարտող համախմբումները շատցան. այս անգամ գումարտողները մեծ մասամբ հայեր էին, խօսակցութիւնները տեղի կունենային հայերէն։ «Բերլին», «ժողով» խօսքերը կը լսէին շատ անգամներ, ինչ որ «յօդուածներ» է որ շտապ կերպով կը սրբագրէին ու կ'ուղարկէին տպարան։

Այդ երեկոներից մէկի մէջ էր – կը յիշեմ – երբ փոքրիկ սենեակիս մէջ դասեր պատրաստելս ընդհատեց դաստիարակս եւ կանչեց ինձ ուրախ ձայնով։ Ներս մտնելուս պէս նկատեցի որ բոլորը զարթ էին, բարձր կը խօսէին եւ կը ծիծաղէին։ Բարեւները չէին վերջացրած դեռ, երբ յանկարծակիի եկայ իմ փափկիկ թշերին իջած ապտակի երեք հարուածներէ...

Ես ապուշ էի կտրած...

Սակայն դաստիարակս գրկելով եւ համբուրելով մօտեցրեց սեղանին եւ ճրագի լոյսին տակ կարդաց.

–Յօդուած 61.

«Թուրքիա կը պարտաւորի

«. . . . . .

«. . . . . .

«. . . . . .

«. . . . . .

«Հասկցա՞ր, հասկցա՞ր» – պոռացին չորս կողմէս – ուրեմն չը մոռնաս»...

«Եթէ յօդուածը մոռնայ ալ, ապտակը չի մոռնար» – աւելցուց Քէշկէքը...

Ողջ 35 տարի է անցած այդ օրէն. ներկաների մեծ մասը չը կան այլեւս։

Բայց եւ այնպէս Հայաստանի բարեկարգութիւնը կսպասէ իր հերթին, Ռաֆֆին եւ Արծրունին կը մնան կենդանի քարոզիչները այդ հրատապ հարցի լուծման համար։

Արդեօք դաստիարակիս խոստացած «աւետիսը» մենք եւս փոխանցելո՞ւ ենք մեր որդիներին...

Սիմոն Զաւարեան

1889 թ.

ԽԱՐԱՁԱՆՈՂ ՄԱՐԳԱՐԷՆ

«Դրօշակ». Նոյեմբեր-Դեկտեմբեր 1913, Թիւ 11-12 (236)

Մայրը սրբում էր աչքերի արցունքները, որպէս զի նորէն ու նորէն տեսնէ հեռում անհետացող կառքը, որ տանում էր իր միակ ուրախութիւնը, իր կեանքը, իր անդրանիկ-զաւակը։

Գնում էր նա դէպի հեռու հիւսիս, գնում էր սովորելու։ Մնաս բարեւին՝ մայրիկը հազիւ հազ պահում էր ոտքերի վրայ, հազիւ հազ զսպում էր իր յուզմունքը։ Չէր ուզում նա վերջին վայրկեանին տխրեցնել, վիրաւորել մեկնող զաւակի զգայուն սիրտը։

Բայց երբ մենակ մնաց, ազատ թափ հաղորդեց յորդ զգացումներին եւ արտասուքը, ջերմ ու խոշոր կաթիլներով սկսեց գլորուել նրա տակաւին երիտասարդ թշերի վրայ։ Այնքա՜ն այլազան մտքեր էին թափառում գլխի մէջ եւ նրա մայրական իմաստուն սիրտը մատնում էր ինչ որ զարհուրելի մի նախազգացում։ Նա բաբախում էր սաստկութեամբ, արիւնում էր եւ նվվում յուսահատօրէն։

Տրոփում էր եւ մեկնող պատանու սիրտը։ Նրա մէջ եւս պայքարում էին այլազան, հակասական մտքեր, մերթ պայծառ ու ժպտուն, մերթ մռայլ, ահաւոր։ Մի բան սեղմում էր կոկորդը, զարնում էր գլխին եւ արցունք էր առաջացնում։ Նա դեռ զգում էր իր կրծքի վրայ լղարիկ կնոջ գլուխը, որ ինչ որ բան էր փսփսում մնաս բարեւին եւ աղօթում էր նրա համար Աստուծուն։

Արցունքոտ աչքերով դիտում էր նա բնութեան իրարու յաջորդող տեսարանները։ Աստուածային աշխարհի գեղեցկութիւնը կամաց-կամաց դիւթում էր նրան։ Եւ նա հետզհետէ դուրս էր մղում իր յիշողութիւնից սիրող մօր պատկերը, ընտանեկան օճախը եւ այն բոլորը, ինչով ապրել էր նա մինչ այն եւ նրա քնքոյշ սիրտը լցնում էր ազնիւ տենչերով ու երազներով։

Կառքը մօտեցաւ այն տեղին, ուր միանում է Կուր գետը Արագայի հետ։

Ջինջ, արծաթափայլ Արագան, յաւիտենականօրէն ժպտուն, կայտառ, աղմկայոյզ, խօլ կատաղութեամբ մխում էր ջրառատ, մռայլ ու դաժան Կուրի ալիքները եւ կարծես հեգնելով ճանապարհ էր բաց անում այդ մութ քաօսի մէջ – յստակ, լուսեղէն ճանապարհ։

«Լոյսի սկզբունքը կով գնաց խաւարին» – մտածեց երիտասարդ ուղեւորը։ Մի մութ անհանգստութիւն պատեց նրան, մի բան, որ գուշակում էր հիասթափութիւն եւ կորուստ լոյսի ու հոգեկան բերկրանքների. սիրտը կսկծաց։ «Մի՞թէ այսպէս պիտի լինի եւ իմ կեանքի մէջ։ Մի՞թէ ես էլ պիտի կորչիմ, պիտի լուծւիմ մարդկային ընդհանուր կեանքի տիղմի հետ»։

Մտքերը պաշարեցին նրան, տխրեց եւ գլուխը քաշ գցեց։

Շուտով սակայն նորէն սթափւեց։ Ըմբոստ, մոլեգնոտ ոգին արծարծում էր նրա մէջ պայքարի, կռւի ծարաւ։ «Ո՛չ, չեմ զիջի ես կեանքի գրոհի առջեւ, չե՛մ թոյլ տայ, որ մռայլ, տղմոտ ալիքները խեղդեն ինձ. ես դեռ կը կռւե՛մ նրանց դէմ»...

Եւ թուխ ու բարի աչքերը պսպղացին հրեղէն փայլով եւ նորէն այդ աչքերը ուրախ էին, յուսավառ։

*
* *

Կեանքը եռում էր Մօսկայում։ Պետրոսեան Գիւղատնտեսական ճեմարանը մասնաւորապէս յայտնի էր այն ժամանակ, որպէս բոյն գաղափարական ու ռազմատենչ երիտասարդութեան։ Բոլոր շրջաններում, համալսարանական բոլոր ժողովների մէջ կը տեսնէինք կարճահասակ, նիհար, հարաւային բնակչի տեսքով մի ուսանող, կոշտ ու արագ շարժումներով. աչքերը սեւ, մեղմ ու բարի, փայլում էին աստղերի պէս, երբ դէմքը փոթորկւում էր տաք, կրակոտ ճառերով։

Հայկական լեռների այդ հարազատ զաւակը այն ժամանակ զգում էր ինքզինքը, որպէս կօսմօպոլիտ, համաշխարհաքաղաքացի եւ մերժում էր ազգայնութիւնը։

Այդ եռուն արհեստանոցի մէջ, ուր կերպարանւում էին զարթ ու աղմկասէր երիտասարդութեան մտքերն ու զգացումները՝ զատւեց ուսանողների մի փոքրիկ խումբ։ Նրանք լուռ էին եւ մտածկոտ։ Նրանց աչքերը յառած էին դէպի հեռու հայրենիքը. նրանց սիրտը բաբախում ու ցաւում էր հարազատ ժողովրդի համար, նրանց ուղեղը յար եւ միշտ միջոցներ էր հնարում՝ ազատելու այդ ժողովուրդը թիւրք բարբարոս բռնակալութիւնից։

Մօտեցան նրան երիտասարդ կօսմօպոլիտին, արթնացրին նրա մէջ հայկական ոգին եւ վառեցին նրա սրտում աստւածային կայծը։

Այդ կայծը բոցավառելով, հրդեհեց նրա ամբողջ էութիւնը, ստիպեց ձգել ամեն բան, ընտանիք, կարիէր, երջանկութիւն, արծարծեց նրա մէջ սէր միայն – սէր դէպի մարդը ընդհանրա-

պէս եւ սէր դէպի հարազատ ցեղը, իբրեւ ամենադժբախտ բեկորը բազմաչարչար մարդկութեան։

Մի անսահման, ջինջ, գրեթէ մայրական սէր դէպի հայ ժողովուրդը... Ահա մի տիրական զգացում, որ լցնում էր այդ սքանչելի երիտասարդների ողջ էութիւնը, հեռու պահելով նրանց այլանդակ նախապաշարումներից եւ դնելով առողջ եւ ամուր խարիսխները հայկական վերածնութեան, առողջ ու անսասան հիմքերը՝ որոնց վրայ պիտի բարձրանար յետագայում Հ. Յ. Դաշնակցութեան փառաւոր շէնքը։

Եւ այդ համեստ, հեզ, ամօթխած երիտասարդները իրենց յամառ, սիստեմատիկ աշխատանքով դուրս բերին հայ ցեղը ստրկութեան անդունդներից եւ պատուաւոր տեղ տւին նրան առաջաւոր Ասիայի ժողովուրդների շարքում։

*
* *

Գարնանային պայծառ Արեւը ողողում էր սար ու ձորեր, տաք, կենսարար ճառագայթներով։ Բնութիւնը վերարթնանում էր, ծաղիկները տարածում էին ամենուրեք իրենց անոյշ բուրմունքը, ամեն ինչ կեանք էր շնչում եւ սէր ու բերկրութիւն։

Նրանք իրար հանդիպեցին։ Երիտասարդը դեռ նոր էր ոտք դրել ուրոյն կեանքի ճամբու վրայ, բայց արդէն իսկ ծանօթ էր հասարակութեան իր տաք, խանդավառ, գաղափարական պատկերով։ Երիտասարդութիւնը ունկնդրում էր նրան, բոցավառում նրա ջերմ խօսքով եւ բազմաթիւ կանացի սրտեր տրոփում էին նրա կրակոտ ու բարեսիրտ նայուածքի հանդէպ։ Բայց նա չէր նկատում այդ. նրա աչքերը շատ հեռուն էին նայում։

Ահա սակայն ցցւեց առջեւը՝ նրա անունով ու պատկերով հրապուրած մանկատիպ «հերոսուհին», եկաւ խռովելու նրա իդէալիստ, գաղափարական պաշտամունքներով տարուած սիրտը... «Ես Ձեզ սիրում եմ» – ասաց ուղղակի երիտասարդ քարոզչին։ Անակնկալ եւ համարձակ այդ յայտարարութիւնը ցնցեց վերջինին, խոնարհեցրեց եւ տրորեց նրա ուժեղ կամքը։ Ուիւծը դարձաւ գառնուկ։ Սիրոյ զգացումը բռնկւեց նրա սրտի մէջ, աւելի եւս շնչաւորեց ու վառեց նրան, աւելի եւս զարկ տւեց գաղափարական նրա թռիչքներին։ Կեանքը այնուհետեւ մի սքանչելի մեղեդի էր նրա համար, գործում էր նա երգելով, աղխարհը թւում էր այնքա՜ն չքնաղ, լի յոյսերով ու երազներով։

Ժամանակը առաջ սահեց...

«Ես Ձեզ այլ եւս չեմ սիրում» – ասաց մի անգամ երիտասարդին իր սիրած ու գուրգուրած էակը, նոյնքան համարձակ ու կտրուկ, որքան առաջին անգամ, երբ իր սէրն էր խոստովանում... Ո՞վ կարող է բացատրել երիտասարդ սրտի քմահաճոյքները...

Նորէն ցնցուեց գաղափարի մարդը, աշխարհը վերստին խաւարեց նրա առջեւ, խորունկ աչքերը վայրկենաբար փայլատակեցին մռայլ չարութեամբ, ապա կրկին մարեցին: Պաղ, սրտաճաք գիշերը համակեց նրա ամբողջ էութիւնը, կեանքն իսպառ կորցրեց նրա աչքում իր համն ու արժէքը, նա այլ եւս խորտակած գոյութիւն էր, մի աւերակ...

Շուտով, սակայն, սթափուեց: Սահմանի միւս կողմից տանջող ժողովրդի հեծեծանքները միշտ աւելի աղէկտուր ու սրտաճմլիկ՝ հասնում էին նրա ականջին: Հնարաւո՞ր էր միթէ չտալ արձագանք: Այդ ժողովրդի բարօրութեան համար չէ՞ր, որ նա որոշել էր զոհաբերել իր կարիէրն ու կեանքը...

Եւ սիրոյ նահատակը վերստին շտկեց իրանը, խոր թաղեց իր վէրքը, յաղթահարեց ու վերադարձաւ նորէն – Կեանքին:

Բայց այդ Կեանքը այնուհետեւ այլ եւս չտեսաւ ուրախութիւն: Նա եղաւ ծայրէ-ծայր մի անհատնում տառապանք, մի անդուլ անձնազոհութիւն ու նահատակութիւն...

*
* *

Երիտասարդ դաշնակցականները ցրուեցին, մտան ժողովրդի մէջ: Եւ սկսուեց եռուն աշխատանքը: Ուժեղ ու յանդուգն սլացք տուին իրենց հոգեկան ուժերին, գնացին խորտակելու հարազատ ժողովրդին կաշկանդող շղթաները: Եւ մարդկային ծովը ալէկոծուեց: Դուրս լողացին նրա յատակից հարիւրաւոր ու հազարաւոր կտրիճներ, երիտասարդ, սրտոտ, խանդավառ: Վսեմ ու եզակի մի երեւոյթ էր: Ի՜նչ ահռելի չարչարանքներ, ո՜րպիսի անլուր, գերմարդկային աշխատանք ու տառապանք: Ընկնում էին հարիւրներով այդ շքեղ հերոսները, սուլթանական անողորմ մանգաղը հնձում էր ու հնձում անդադար, հայ մայրերը լալիս էին յուսահատ՝ իրենց սիրած զաւակների վրայ, բայց նրանք անայլայլ առաջ էին նետւում տատասկոտ ու արիւնոտ ճանապարհով, գնում էին զոհւելու... «Ազատութի՜ւն կամ մա՜հ» – այդ կոչը որոտընդոստ արձագանքներով տարածւում էր հայկական լեռների մէջ: Տարերային մի յորձանք էր, անդիմադրելի մի մղումն՝ դէպի ահաւոր արկածներ, նահատակութիւն եւ մահ... Թափւած արիւնը

ծնունդ էր տալիս նոր ու նոր անձնազոհ կտրիճների, հերոսների։

Մարած հրաբուխը վերարթնանում էր։ Եւ փոքրաթիւ պարագլուխները, որ հոգին էին այդ չքնաղ վերածնութեան, քաջալերում էին ու միշտ աւելի սաստկացնում իրենց թափը։ Ստուերի մէջ էին մնում նրանք, բայց յայտնի էին ամենքին, նրանց անունով երդում էր գաղափարական ու մարտնչող երիտասարդութիւնը։ Համեստութիւն եւ ազնուութիւն՝ դարձել էին նրանց մէջ պաշտամունք։ Ապրում էին նրանք նիւթական կարօտութեան մէջ, թէպէտ եւ նրանց առջեւ բաց էին հարստութեան ճամբաները։ Միշտ զինուորական իրենց դիրքերում, միշտ պարտքի դաշտի վրայ, յաճախ լքած իրենց հայրենակիցներից ու բարեկամներից՝ նրանք անվհատ դիմում էին դէպի Նպատակը։

Մէկը առանձնապէս աչքի էր ընկնում այդ փոքրաթիւ առաջնորդների մէջ իր անհաշտ թշնամութեամբ դէպի Կեղծը, Անազնիւը, Անմաքուրը։ Բարակ, նիհար, խորունկ ու խոշոր աչքերով, փոքր ինչ կոշտ շարժածքներով ու ժեստերով եւ միշտ բարձրատոն, տաք ու տաքացնող ճառերով՝ նա յիշեցնում էր անապատից եկած ճգնաւորի, հինաւուրց մարգարէի, որ գնում էր դէպի մարդիկ՝ խարազանելու նրանց բարոյական արատները եւ ամեն տեսակ ապօրինութիւն ու անարդարութիւն։

*
* *

Օսմանեան սահմանադրութեան առաջին շրջանում էր, մարդիկ դեռ հաւատում էին նրա ամրութեան ու ճշմարտութեան։

Նա եկաւ Մուշ։ Գրեթէ յաղթական մի ընթացք էր։ Բայց ոչ այն աղմկալի դիմաւորումներից՝ որ սնափառ հասարակութիւնը սովորաբար սարքում է իր սնափառ հերոսների համար։ Դա մի համեստ, բայց անկեղծ տօնախմբութիւն էր որ սարքում էր պարզ, աշխատաւոր ժողովուրդը։ Մուշից եւ շրջակայ գիւղերից երիտասարդութիւնը շտապում էր տեսնել Նրան, սեղմել, համբուրել նրա ձեռքը։ Չէ՞ որ նա նրանց համար ղեկավար էր այն երկարատեւ ու արիւնոտ կռի մէջ, որ նոր էր վերջացել։ Նա հեռաւոր ու խորհրդաւոր հիւրն էր, որի մասին շատ էին լսել, բայց դեռ երբէք չէին տեսել։

Խումբ-խումբ գալիս էին նրա մօտ եւ կռող ընկերները, նրանք, որոնք մի ժամանակ դողացրել էին Սասնոյ լեռների մէջ անգամ համիդեան զինուորներին, իսկ այժմ հանել էին իրենց առիւծի մորթիները եւ համեստօրէն լծել գիւղական աշխատան-

քի մէջ։ Նրանք արդէն ճանաչում էին նորեկին, ճանաչում էին նամակներով, գաղտնի, ծածկագիր կամ այլաբանօրէն գրած նամակներով, որ ընկել էին իրենց ձեռքը հեռաւոր վայրերից, հազար ու մի փորձութիւնների միջից անցնելով։ Բայց նրանք էլ դեռ չէին տեսել իրենց մտաւոր առաջնորդին եւ ահա գալիս էին դիմաւորելու, ուրախ, անհամբեր, իրենց գեղջկական ցնցոտի-ներով։ Տեսնում էի արցունքներ նրանց դաժան աչքերի մէջ...

Նա հաստատուեց Մուշի մէջ։ Նա այժմ արդէն զուտ կրթական ծրագիրներ ունէր. կուզէր բարձրացնել հայ ժողովրդի մտաւոր ու հոգեկան զարգացման մակերեւոյթը։

Վարձեց մի անշուք տնակ, երկու փոքրիկ սենեակներից, որոնց յատակը հող էր եւ ունէին մի մի փոքրիկ լուսամուտ, զանազան ճեղքւածքներով։ Նահապետական մի վառարան, որ չէր տաքացնում սենեակները։ Կոշտ ու կոպիտ փայտէ կարասիներ, որ իր պատէրով շինել էին մշեցի վարպետները։

Ձմեռը ցուրտ էր սենեակներում։ Ջուրը սառչում էր գիշերը։ Բայց նա չէր բնաւ տրտնջում։ Նա տաքացնում էր իրեն այցելու բազմութիւնը իր ջերմ, սիրալիր խօսքերով եւ լայն հիւրասի-րութեամբ։ Հարուստները, ազդեցիկները չէին գնում նրա մօտ, այլ միայն խեղճ ու կորած մարդիկ, որոնց արտաքինը կեղտոտ էր, բայց հոգին պարզ ու մաքուր։ Բոլորի համար նա խորհրդատու էր եւ իր չնչին վաստակի մեծագոյն մասը բաժանում էր չքաւորներին։

Բայց ահա ամպերը սկսեցին խտանալ իր շուրջը։ Մութ, կասկածելի մարդիկ, վաշխառուներ, որոնք յեղափոխական

Զաւարեանի տունը Մուշի մէջ

շարժման ընթացքում, օգտուելով կուսակցութեան անունից, ծծել էին ժողովրդի կենսական հիւթերը, յետադէմ բռնատիրներ ու կուսակցական զէնքը թագցնողներ, ամէն տեսակ կեղեքիչներ ու հարստահարիչներ, լրտես ու դաւաճաններ, վերջապէս խաբեբայ ու տգրուկ վանականներ – բոլորը յուզուեցին, իրարու անցան: Նորեկը հանգիստ չէր տալիս նրանց: Անողոք ամեն տեսակ լրբութեան ու աղտոտութեան հանդէպ՝ նա հրապարակով խարանում էր նրանց հեղինակներին, պահանջում էր բացատրութիւն նողկալի արարքների համար, պահանջում էր հաշիւ ծախսուած դրամների, պահանջում էր արտաքսել նրանց բոլոր ասպարէզներից, ուր կարող էին վնասակար լինել իրենց անարգ, հակաժողովրդական գործունէութեամբ:

Շատ բան աջողում էր նա: Թւում էր թէ արդէն մօտ էր յաղթութեան ժամը: Բոլոր զրկածները, որբ ու այրիները հաւատում ու վստահում էին նրան եւ սպասում էին նրանից իրենց վիճակի թեթեւացում:

Սակայն մութ ուժերն եւս չէին ննջում: Նրանք ալէկոծուեցին ու համախմբուեցան: Նրանք ի գործ դրին ամեն միջոց խարազանող մարգարէի դէմ – դաւ, գրգռում, սուտ ու անարգ զրպարտութիւն: Նրանք հիւսեցին մի ահագին սարդոստայն, ցանցով պատեցին նրա գործունէութեան ամբողջ դաշտը, ձգտեցին պատնէշ դնել նրա ամեն մի ձեռնարկի առաջ եւ ճարպիկ, հմուտ դաւերով խափանեցին նրա բոլոր հանրօգուտ փորձերը: Իրենց աղտոտ թաթերով քրքրեցին անգամ նրա մասնաւոր կեանքը: Եւ այդպիսով նրանք անհնարին, անհանդուրժելի դարձրին նրա աշխատանքը Մուշի մէջ:

Եւ նա ի վերջոյ տեղի տւեց: Սեւ ուժերի բանակը խորտակեց նրան: Թողեց նա Մուշը, լի դառնութեամբ, ծանր խոհերով, թողեց մտածելով, որ ժողովուրդը աւելի դժարութեամբ կ'ազատագրւի իր համարիւն կեղեքիչներից, քան թէ արտաքին թշնամուց:

Ժողովրդի թշնամիները յաղթանակեցին, կացութեան տէրերն էին նրանք: Բայց անխոնջ աշխատաւորի ձգած սերմը անպտուղ չ'անցաւ: Նա տւեց իր բողբոջները: Ժողովուրդը սթափւեց: Նա հասկացաւ, թէ ո՞վ էր եւ ինչ էր այն մարդը, որին նա կորցրեց: Եւ խուլ դժգոհութիւնը ծայր է տալիս արդէն հարստահարւած հայ աշխատաւորութեան մէջ, ընդդէմ իր ցեղակից թշառականների: Դժգոհութիւնը շուտով կը վերածւի ըմբոստացման ու պայքարի:

Խիստ դժարին է այդ պայքարը, բայց նրա ալիքը աճում է հետզհետէ եւ լիայոյս ենք, որ մաքրութեան ու շիտակութեան

առաքեալի նետած գաղափարը կը ձգէ խոր արմատներ եւ ժամանակով կը յաղթի։

*
* *

Նա նորէն Պօլիս է, այդ թշառ ու եղկելի աղբանոցում։

Կուշտ, պահպանողական «ազգայիններ»ի հոգաբարձութիւնը մեծ դժկամակութեամբ տեղ տւեց նրան դպրոցի մէջ։ Չէ՞ որ նա յեղափոխական էր, դաշնակացական էր։ Կարելի՞ է միթէ այդպիսի

Զաւարեանը գրկած իր զաւակը՝ Վիգէն

մարդուն տեղ տալ ազգային դպրոցներում։

Նշանակում են մուրացկանի ռոճիկ։ Ապրում է նա այդ գրօշներով, փնտրում է բնականաբար աժան ու վատ ճաշարաններ, իսկ հագուստը՝ միշտ հնամաշ ու պատռուած։

Նա մնում էր սակայն նույն անվկանդ գործիչը, անսասան իր շիտակութեան ու վեհանձնութեան մէջ եւ շարունակում էր ղեկավարել մտքերը։ Տաք վիճաբանութիւններ, լուսաւոր, բարձրաթռիչ երազներ – ահա այն մթնոլորտը, որ նա մտցրեց իր դասարանի մէջ եւ որով սնում, ապրում էր։ Անմիջական մասնակցութիւն ունէր հայկական կեանքի բոլոր առաջադիմական երեւոյթների մէջ, առանց նրան գրեթէ ոչինչ չէր յղացում։

*
* *

Անհանգիստ, եռուն բնութիւնը թոյլ չէր տալիս նրան հանգստանալ։ Աշխատում էր նա մինչեւ ուժասպառում, յոգնում էր այնքան յաճախ՝ որ օրայ մէջ մի քանի անգամ պառկում էր ուժերը վերականգնելու համար։ Յաճախ էր հիւանդանում, բայց գլուխը շարունակում էր աշխատել – միշտ պայծառ ու լուսաւոր, լի ինքնատիպ գաղափարներով ու յղացումներով, միշտ գեղեցիկ եւ ճշմարիտ։

Պարզ էր, որ մարմինը մաշւում էր, ֆիզիկական ուժերը սպառւում էին։ Սակայն նա ինքը չէր խոստովանում այդ եւ շարունակ ձգում էր արդէն խիստ ձգած լարը։ Եւ նա ահա կտրեց... Կտրեց յանկարծ, շանթահարելով բոլորովին, կտրեց այն ժամին, երբ նա այնքան պէտք էր իր ժողովրդին, որի ճակատագիրը վճռում էր, որին բախտը ժպտում էր, գուցէ առաջին անգամը հարիւրաւոր տարիների սոսկալի նահատակութիւնից յետոյ։

Պոկեց այդ կեանքը անողորմ ձեռքով, ինչպէս պոկում են ծաղիկները, որոնց նա այնքան սիրում էր իր քնքոյշ, կանացի սրտով։

Բայց – թառամածը չես կենդանացնի, գնացողը էլ չի վերադառնար։ Մնում է մի բաց, որ կը լցի ժամանակով եւ վէրքը կը կազդուրի։

Իսկ դու, հա՜յ ժողովուրդ, պիտի յիշե՞ս արդեօք այդ մարդուն, որի ամբողջ կեանքը մը մարմնացած սէր էր դէպի քեզ, ջերմ, քնքոյշ սէր, որ չգիտէր ոչ մի սփոփանք։ Նա աւելի ջինջ էր, աւելի անուշահամ, քան պատանիի սէրը դէպի կոյսը։ Նա աւելի լեցուն ու անյատակ էր, քան մօր սէրը դէպի իր մանկիկը։

Այդ կեանքը ծայրէծայր մարտիրոսութիւն էր յանուն քո երջանկութեան, հա՜յ ժողովուրդ։ Քեզ համար նա մոռացել էր ամեն բան այս աշխարհում, մոռացել էր նոյնիսկ ինքն իրեն։ Դու, քո ապագան նրա կեանքի միակ նպատակն էիք եւ նրա միակ

ուրախութիւնը։ Լալիս էր նա եւ երազում քո բզկտած, կիսակենդան մարմնի վրայ։ Երազում էր եւ ձգտում կռել քեզ համար աւելի երջանիկ ապագայ։

Պիտի յիշե՞ս նրան, հայ ժողովուրդ, – չգիտեմ։ Մարդկութիւնը այնքա՜ն մոռացկոտ է։ Բայց նրա համար – միեւնոյն է։ Նա չէր տանում պերճանք ու երախտագիտութեան ցոյցեր՝ իր կեանքի ընթացքում։ Դրանք բնաւ պէտք չեն նրան եւ այժմ, մահից յետոյ։

Բացած գերեզմանը կը լցի։ Կը մարէ շրջապատի ժխորը, կը լռեն թաղման որոտուն ճառերը, որոնց համար այնքան շռայլ են մարդիկ։ Կը սրբուին վերջին արցունքները եւ բոլորը կերթան գերեզմանոցից։ Կը մնայ նա մեն-մենակ – նրա ցուրտ մարմինը – գերեզմանային հանդիսաւոր լռութեան մէջ։

Մեն-մենա՜կ... Մայր-Բնութիւնը կը գրկէ նրան, կընդունէ իր հզօր կուրծքի վրայ այդ յոգնած, պաշտելի գլուխը կը սփռէ նրա շուրջը իր այլազան գեղեցկութիւնները։ Կեանքը՝ զարթ ու փարթամ՝ կը ծաւալի նիրական դամբարանի մօտ։ Արեւը կը ճառագայթէ կենդանարար իր լոյսը, ծաղիկները կը փռին ու կը գուրգուրան իրենց թանկագին սիրեցեալին... Եւ սիրոյ, ջերմութեան ու լոյսի այդ գերագոյն ներդաշնակցութեան մէջ՝ կը հանգչի նրա ոգին, որ նոյնքան ջերմ, պայծառ, լուսատու է եւ նոյնքան յաւերժական։

Սիրոյ սերմը կեանք տուեց նրան։ Եւ նրա կեանքը լուսաւոր ամպի նման սփռեց ահագին տարածութիւնների վրայ, ցանելով ամենուրեք սերմեր մարդասիրութեան ու այլասիրութեան։ Այն գոհարները, որոնցով բնութիւնը առատօրէն օժտել էր նրան – բոլորն էլ նա վերադարձրեց իր ժողովրդին։ Ինքը մնաց առանց ոչնչի։ Հոգին, իր վերջին գոյքը, աւանդեց նա Տիեզերքին։

Այնտեղ, Բնութեան ծոցում, չկար այլ եւս լաց. արցունք, ատամների կրճտոց։ Այնտեղ վերջապէս կը հանգստանաս դու, սիրելի ընկե՛ր...

*
* *

Քե՛զ եմ դիմում, սքանչելի՛ մանկիկ, որ աշնան ծնունդն ես քո անբախտ հայրիկի եւ միակ գոհարիկը նրա շռայլած գանձերից։ Աճի՛ր, իմ սիրելի Վիգեն. եղիր մաքուր աղանեակ եւ սրաթռիչ արծուիկ... ու գնա՛ նոյն ճամբով։ Դուն էլ դի՛ր գլուխդ հարազատ ժողովրդի համար եւ եղիր արժանի Հայրիկիդ։

Դոքտ. Յ. Զաւրիեւ

ԸՆԿԵՐՈՋ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Դրօշակ». Նոյեմբեր-Դեկտեմբեր 1913, Թիւ 11-12 (236)

Սիրելի՛... Դառն օրեր շատ եմ ապրել. այսօր կարծես դառնագոյնն է... Երբէք այնքան ճնշած, խորտակած չեմ եղել, ինչպէս այժմ: Սրանից 21-22 տարի առաջ, Դերեկայ վանքի մօտ, երբ դեռ նոր էի ոտքս դրել կեանքի շէմքին, քրդերը սպանեցին իմ սիրելի ընկերոջ Մովսէսին (Ներսէս Իշխանեան): Երեխի պէս լաց եղայ. զգում էի ինձ միանգամայն որբացած: Մովսէսը աւելի տարիքոտ էր եւ փորձառու, իսկ ես երիտասարդ ու անփորձ:

Անցան այնուհետեւ 21-22 ձիգ տարիներ. ինչե՞ր չեկան մեր գլխուն քանի՜ անգամ մահու ուրուականը սլացաւ մեր վրայից – տքնեցինք, մարզուեցինք, ծերացանք. ալեզարդ մազեր, աւերուած ջղեր... Եւ ահա նորէն մի դաժան հարուած, ամենածանրը, որ ստանում եմ այն հեռաւոր օրերից ի վեր եւ որի տակ վերստին զգում եմ ինձ – որբ: Մահը խլեց մեզնից իմ սիրելի, իմ պաշտելի Սիմօնին: 20 տարի է, ինչ ճանաչեցի նրան – եւ 20 տարի էլ շարունակ կը սիրէի:

Տաս տարի առաջ էր: Երկարատեւ թափառումներից ու տանջանքներից յետոյ, ինչպէս բուքից ազատուածը, մի տաքուկ սենեակի մէջ, հանգիստ էի առնում: Քանի մի ընկերներ եկան մօտս. մինը առաջարկում էր Սասուն գնալ, միւսը՝ Պարսկաստան, երրորդը՝ մի այլ տեղ, բայց ես բոլորովին ուժասպառ էի եւ կուզէի ժամանակաւորապէս հանգստանալ: Մերժում էի ընկերներին: Բայց ահա Սիմօնի մի նամակը:

-«Հանգստանալու ժամանակ չէ սիրելիս. ես պէտք է երթամ Կիլիկիա, դուն էլ պէտք է գաս ինձի հետ»:

Մերժել այլ եւս չէի կարող – գրողը Սիմօնն էր: Եկաւ ինքն անձամբ եւ ես խօսք տուի: Նորէն տարագրի ցուպը ձեռք առայ: Սիմօնս անչափ ոգեւորուած էր, բնաւ չէր հանգստանում, անվերջ աշխատում էր: Ուր էլ լինէր – իսկոյն բարեկամների, ընկերների մի շրջան կը կազմէր. կը մտնէր բոլոր խաւերի մէջ, այնքան նա մատչելի էր: Ուր էլ գտնուէր, բոլոր տեղերի հետ կապեր կը պահպանէր եւ ամեն վայրից տեղեկութիւն կունենար: Թղթակցութեան մէջ անսովոր եռանդ ունէր:

Երկար պտտոյտներից յետոյ՝ Բէյրութ ենք, ապրում ենք մի հիւրանոցում։ Գնացել էի դուրսը պտտելու։ Վերադառնում եմ եւ մտնում Սիմօնի մօտ։ Նրա դէմքը այլայլած է, մատները այրուած։ Ի՞նչ է պատահել, հարցնում եմ պատասխան չէ տալիս։ Նորից եմ հարցնում – եւ նա հեռագիր է դնում առջեւս... Քրիստափորի մահուան բօթն էր։ Երբ հեռագիրը կըստանայ, ալքօլի վրայ թէյ կը պատրաստէր եւ սոսկումից ու շփոթելուց ձեռքերը կ'այրէ։ Շատ արտասւելուց՝ դէմքի արտայայտութիւնը բոլորովին փոխւել էր։ Խե՜ղճ Սիմօն, ինչպէ՞ս չը լար։

Սակայն վհատութիւնը վայրկենական էր. նա շարունակեց աշխատիլ։ Մի նոր գոյժ հասաւ – այս անգամ Կովկասից։ Պայթել էր հայ-թաթարական ընդհարումը, մի անակնկալ, որ մեզ երկուսիս էլ շշմեցրեց։

Պէտք է վերադառնայի առժամապէս Ժընեւ։ Սիմօն դեռ պիտի մնար։ Յանձեց ինձ մի քանի նփրական իրեր՝ Ժընեւ բերելու համար։ Հաւաքել էր իր կիլիկեան թափառումների միջոցին։ Սիմօնը – պաշտող, սիրահար հայկական բնութեան, նրա օդի, ջրի, լեռների ու ձորերի... Զէյթունի մէջէն անցնող Ջիհան գետի ջրից լցրել էր մի շիշ եւ պահել, որպէս սրբութիւն։ Մերսինի թէ Թարսուսի բանտարկեալներին այցելելով, ստացել էր նրանցից, իբրեւ յիշատակ, նրանց ձեռքի աշխատանք – վեց փայտէ գդալներ։ Մի ինչ որ լեռից մի կտոր քար էր վերցրել եւ մի քանի ուրիշ մանր մունր բաներ, բոլորն էլ կիլիկեան յիշատակներ, յանձնեց ինձ, որ բերեմ Ժընեւ, «Դրօշակ»ի թանգարանի համար։

Մօտ մի տարի անց՝ նորէն հանդիպեցի սիրելի ընկերոջս Կովկասում։ Եւ նորէն միասին ճանապարհ ընկանք – այս անգամ դէպի Ղարաբաղ, խոր ձորերի ու կուսական անտառների միջից։ Երբ մտանք Գանձասարի անտառը, Սիմօն տեսնելով լեռան վրայ հռչակաւոր վանքը, յուզւեց, էլ չէր կարող համբերել, խնդրեց, որ իսկոյն բարձրանանք վանքը նայելու։ Գնացինք։ Մեր ընկերների մէջ Սիմօնի պէս հետաքրքիր մէկին չեմ պատահել։ Մի քանի ամսից յետոյ նորէն ուղեկիցներ էինք։ Ապա դարձեալ բաժանւեցինք։ Վերջին անգամ Պօլիս տեսայ իրեն, նոր վերադարձել էր Մուշից, Սասունից, իր այնքան սիրած ու գուրգուրած վայրերից, ուր այնքան աշխատանք էր թափել եւ այնքան զրկանքներ կրել յանուն ժողովրդի յառաջադիմութեան, փոխարէնը յաճախ հալածանք

ու պարսաւանք կրելով։

Տարօնից էլ բերել էր հետը յիշատակներ. երկու վայրի ոչխարի եւ մի արջի մորթ... Անվերջ չարչարանքներից, հալածանքից ու զրկանքներից յետոյ, երբէք ես նրա բերնից չեմ լսել դժգոհութեան խօսք։ Գուցէ Սիմօնը միակ լինի՝ այնքան անուշադիր դէպի իր սնունդը, հագուստը եւ այլ պէտքերը։ Շատ էի կռում, յանդիմանում, բայց նա ժպտում էր ու կարեւորութիւն չէր տալիս։

Ժուժկալ էր մանաւանդ իր քարոզչական թափառումների ընթացքում։ Կը մտնէի իր սենեակը, ահա նա յոգնած պառկել է, ըստ սովորութեան կողքի վրայ եւ անբաժան շալը ուսերին։ Ապա կը վերկենար ու թէյ կը պատրաստէր. ծորակը կոտրած մի թէյաման ունէր, արկղի մէջ՝ մի քիչ հաց ու պանիր, կամ մի երկու հաւկիթ, մի թղթի մէջ՝ շաքար ու սուրճ կամ թէյ, ալքօօլի լամպան էլ քովը։

Յիշողութիւնները առատ-առատ խմբւում են ուղեղիս մէջ, սեղմում եմ կոկորդս...

Հիւանդ էի, անկողնի մէջ, երբ ստացայ գուժաբեր հեռագիրը։ Ուրբաթ օր գնացք նստեցի դէպի ծովեզերք (Բանդրմա), ուակից ծովով 5 ժամ է մինչեւ Պօլիս։ 11 ժամ գնալէն վերջ հասնում եմ Բանդրմա. բայց նաւ չկայ։ Սպասեցի միւս օրւան, դարձեալ չկայ նաւ։ Ենթադրելով, որ հէնց կիրակի օր մարմինը պիտի փոխադրէին Կովկաս, մտածեցի, որ անօգուտ է աւելի սպասել. այնքա՜ն տանջւում եմ, որ չկարողացայ վերջին անգամ տեսնել իմ սիրելի Սիմօնին, վերջին անգամ համբուրել նրա անբիծ ճակատը։ Հեկեկացի անվերջ, երեխայի պէս... Հարւածը սոսկալի է։

Եւ այսպէս գնում են մին միւսի ետեւից մեր առաջնորդները, մեր անձնուրաց գործիչները. գնում են՝ իրենց տեղը պարապ թողնելով։ Նոր սերունդը կը տա՞յ մեզ արդեօք Սիմոններ...

Վարդան

Խանասորայ Վարդան

ՋԱԻԱՐԵԱՆԻ ՀՈԳԻՆ

Ահաւասիկ մօրդ արցունքն իմ ճակտիս,
Եւ իր աղերսն ու հեծեծանքը աչքերուս մէջ.
Ահաւասի՛կ զաւկիդ զարմանքն ու զարհուրանքը հոգիիս հետ՝
Ես քե՛զ կուգամ քու մաքուր մահդ ողջունելո՜ւ...

Եւ ես կ'ողջունեմ քեզ, ո՜վ Լոռիի լռին զաւակ,
Որ Սանահինին դէմ՝ դուն քու հոգիդ ծաղկեցուցիր.
Եւ ես կ'ողջունե՛մ քեզ Արարատի ազնի՛ւ որդի,
Արագածի՛ հարսնեղբայր, եւ Արաքսի՛ արգասիք...

Եւ ես կ'ողջունե՛մ քեզ, ո՜վ մարդկային հայելի,
Որուն մէջ մին իր հրաշքին ծանօթացաւ.
Եւ որուն մէջ ուրիշ մը իր սեւ դէմքէն էր շանթահար...
Եւ որուն մէջ անթիւներ առաքինութեամբդ օծուեցան...

Եւ ես կ'ողջունեմ քեզ, ո՛վ յանկարծամահ ուղեւոր,
Եւ փառքերէ փախստական եւ բոպէի տարագիր,
Ակնթարթի՛ մէջ ոգեւորող եւ լոյսէն արագ մահացեալ
Եւ այսպէս թո՛ղ ողջունեմ քեզ, մահանդ առջեւ երգելո՜վ..

Եւ թող ողջունեմ քեզ, ո՜վ հոգիի ուսումնարան,
Ուր մարդերն սկսան մէկզմէկու վրայ խորհիլ.
Եւ ես կ'ողջունեմ քեզ, ո՜վ բարեհամբաւ բանտարկեալ,
Երբ քո քաղցի օրերուդ դուն քու սիրտդ կրծոտեցիր...

Եւ նորէ՛ն քեզ կ'ողջունեմ, գերերջանիկ գիւղատնտես,
Երբ քու գութդ ուրիշին համար գարո՜ւն էր...
Երբ ամառդ առատութի՛ւնն էր թշուառին,
Երբ աշունդ արդի՛ւնք էր եւ քու ձմեռդ արեգա՛կ...

Եւ ես կ'ողջունեմ քեզ, խորհրդանիշ պայծառութեան,
Դո՛ւն մարդերու խղճի նժար,
Դո՛ւն մարդերու մտրակիչ եւ մարդերէն մարտիրոս.
Եւ դուն, անոնց անգին նոխազ, եւ դուն անոնց անգին գերի...

Եւ ես թո՛ղ ողջունեմ քեզ, երէց եղբայրը մեր ամենուն,
Մեր ամենուն խնկարկու, մեր ամենուն մտրակիչ,
Եւ անկաշկանդ հռետոր եւ մաքսատրաց հալածիչ...
Եւ դուն տաճարներ մաքրագործող ընկերային Նազովրեցի...

Եւ ես՝ իմ սէրերովս կ'ողջունեմ քեզ, թափառական այցելու,
Դուն՝ ուրիշին ուղեցոյց, դուն ուրիշին արահետ,
Դուն ուրիշին ոտքի հող, եւ ուրիշին գլխի պսակ,
Եւ ուրիշին ողջակէզ, եւ ուրիշի համար ամրոց...

Եւ նորէ՛ն քեզ կ'ողջունեմ, ո՜վ ձեռքէ ի ձեռք շրջող՝
Հոգէ սափոր անպերճանք,
Որուն մէջէն ժողովուրդ մը յուսահատ՝
Քու հոգիիդ հուրը խմեց...

Ու դարձեալ կ'ողջունեմ քեզ, ո՜վ տառապանքի բեռնակիր,
Հասարակաց դուն ուղղամիտ սպասաւոր.
Ժողովրդի ժամկոչ, զրկեալներու իրաւաբան,
Եւ պարագլուխ խոնարհ եւ անդադար մշակ եւ մեծարժէք բանտոր...

Եւ ես կ'ողջունեմ քեզ, ըմբոստութեանց կարմիր դրօշ,
Որ գերիին եւ անխիղճին համար՝ նոյն ժամանակ ծածանեցար,
Եւ դեռ քաղցրօրէն դուն ձիթենի խաղաղութեան,
Եւ մրրիկէ մը տարած բազմապտուղ եւ բարի ծառ...

Եւ ամեն խիղճ թող ողջունի քեզ, ո՜վ մաշած ծունգով ճգնաւոր,
Գաղափարի եւ գիտութեան մեծահմուտ տարածիչ,
Անխոնջ ցանող հայ դարերէն մեր ժառանգած յոյսերուն
Եւ յոյսի վկայ, յոյսի եղբայր, յոյսէն գինո՛վ գործաւոր։

Եւ ամեն ոք թող ողջունէ քեզ, ով անօրի ճանապարհորդ,
Որ իր ցուպն ի ձեռին ուրիշին համար միայն մուրաց.
Եւ թո՛ղ ողջունեն քեզ, ո՛վ զգացմանց յստակ ջրվէժ,
Որուն սիրտը աղբիւր մըն է մէն մի ծարաւի հանդէպ...

Եւ մարդերն թող ողջունեն քեզ, ո՜վ հազագիտ լուսարար,
Որ իր կաթիլ մը իւղովն ուրիշին կանթեղը կը վառէր...
Եւ նորէն քեզ կ'ողջունե՛մ, ո՜վ նուիրական կտաւագործ,
Որ ի՛ր անձին պատանքէն ուրիշին պատրոյգ միա՛ն կտրեց...

Եւ վերջապէս իմ ձեռքերս դէպի երկինք թող ողջունեմ քեզ՝ ո՛վ
Խրիմեանի մը հոգւոյն եղբայր,
Դուն լոյսի՛ սրինգ, լոյս աչքերով հողէն ելած ուրական,
Լոյսին վազող առաքինի, լո՛յս բաժանող Հայրենասէր,
Լոյսին դիմաց ծնրադիր եւ լոյսին համար մահացող մարդ...

Սիամանթօ

ՍԻՄԷՕՆ ԶԱՒԱՐԵԱՆ. (Յիշողութիւններ)

«Հորիզոն», Թիֆլիս. 3 Նոյեմբեր 1913, Թիւ 248

–Ոչ ոքից չի կարելի պահանջել, որ լինի տաղանդ, հանճար, բայց ամեն մի անհատից պիտի պահանջել, որ լինի ազնիւ ու շիտակ։

Մեր մեծանուն հրապարակախօս Գրիգոր Արծրունու այս խօսքերի վրայ եթէ աւելացնելու լինենք եւ այն, որ Սիմէօն Զաւարեանը մտաւոր լուրջ պատրաստականութեամբ հանդերձ՝ բացի շիտակ ու ազնիւ լինելուց, իր երկարամեայ բազմապիսի գործունէութեան ընթացքում եղել է մի հազւագիւտ տիպար բացարձակ անկեղծութեան, – այն ժամանակ հասկանալի կը լինի այն խոր կսկիծը, որ համակել է մեզ բոլորիս նրա անակնակալ կորստը։

Հե՞շտ է ասել.

–Չկայ այլեւս Սիմէօն Զաւարեանը։ Նա՝ որ իր երիտասարդական մատաղ հասակից մինչեւ կեանքի վերջին շունչը, ոգեւորած ժողովրդական ազատագրութեան վեհ գաղափարով, տուեց իր հայրենիքին ինչ որ ունէր՝ ազնիւն ու օգտակարը.– բազմաթողմանի գիտութիւն, բիւրեղի նման մաքուր սիրտ ու հոգի, աննկուն, անընկճելի կեամք։ Եւ ընկաւ հաւատարիմ իր փայփայած դրօշակին։

Նա՝ որ շինականի արօրն եւ աշխատաւորի դառն քրտինքը դարձրեց իր կեանքի գերագոյն ապրումների եւ յոյզերի առարկան։

Ոչ. այդպիսի դէմքերը չեն մեռնում։

***

1887/8 թւականներին Ս. Զաւարեանը, սնած ռուս լաւագոյն երիտասարդութեան ժողովրդասէր ձգտումներով, վերադարձաւ Կովկաս եւ մտաւ հայ երիտասարդութեան շարքերը։ Նա գտաւ այստեղ եւս բուռն ոգեւորութեան մի նոր

շրջան։ Տաճկահայաստանի դատե – սա էր ամենքի յոյզերի եւ մտորումների առարկան։ Պատմական վերջին դէպքերը նոր յոյսեր էին ներշնչել հային։

Վերջին ռուս-տաճկական պատերազմը, Բալկաններում մանր ազգութիւնների ազատագրումը, Գում-Գափուի ցոյցը, Վարդենիսի դէպքը Տարօնում, ցնցել էին հայութեան բոլոր խաւերը։ Դարերի ստրկութիւնից հիւծած, սիստեմատիք ոչնչացման անդունդի գլխին կանգնած հայութիւնը Տաճկաստանում, պահանջում էր մարդկայնօրէն ապրելու իրաւունք։ Եւ սկսեց ազգերի պատմագրութեան մէջ հազւագիւտ անհաւասար կռիւներից մէկը։ Կարո՞ղ էր արդեօք Զաւարեանը լոկ հանդիսատես լինել իր ժողովրդի մարտիրսագրման մեծ դրամայի հանդէպ։

–Ի հարկէ ոչ։

Ես յիշում եմ այդ վառվռուն, իդէալիստ երիտասարդի առաջին խօսքերը։

–Շատ լաւ, բայց ինչո՞ւ կռիւ, ինչո՞ւ արիւն. Ես դէմ եմ ամեն տեսակ բռնութեան։ Պիտի մտնել հայի խրճիթը, քրդի վրանը, տաճիկ գիւղացու բնակարանը եւ քարոզել ամենքին ազգերի համերաշխ գործակցութեան, հաւասարապէս կեանքից եւ աշխատանքից օգտուելու յաւիտենական գաղափարները։

Այդ օրւանից Զաւարեանը իր կեանքը կապեց հայի բազդի, հայի ճակատագրի հետ եւ քառորդ դար շարունակ մոռացած իր եսը,– ա՜հ, ի՜նչ եմ ասում, նա չունէր իր եսը,– կանգ չառնելով ոչ մի զրկանքի ու դժարութիւնների առաջ։ Միմիայն իր նմաններին յատուկ անձնուիրութեամբ, կատարեց իր քաղաքացիական մեծ պարտքը։

Կեանքը, մանաւանդ հայ գիւղացիութեան ուսումնասիրութիւնը թէ այստեղ Կովկասի եւ թէ Տաճկահայաստանի հեռաւոր անկիւններում, չէր կարող որոշ ազդեցութիւնը չթողնել երիտասարդ Սիմոնի զգայուն հոգու, նաեւ գաղափարների վրայ։ Բայց մի բան անկասկած է.– նա մինչեւ վերջը անսասան մնաց իր հիմնական սկզբունքների մէջ։ Խօսքը առանց գործի գին չունէր Սիմոնի համար եւ նա տեղափոխեց իր գործունէութիւնը

այն երկիրը, որին ապագային իր բոլոր ոյժերը նվիրեց։

***

1890 թ. սեպտեմբերի սկզբներում Զաւարեանը անցաւ Տրապիզոն երկսեռ դպրոցների տեսչի պաշտօնով, իր մի ընկերոջ հետ։ Մի ամսից յետոյ գնացի եւ ես եւ տեսայ թէ որպիսի եռանդով Զաւարեանը կպել էր իր գործին։ Կարճ ժամանակամիջոցում նա կարողացել էր ձեռքբերել աշակերտութեան, ուսուցիչների եւ ժողովրդի բուռն համակրանքը։ Բայց սկսած գեղեցիկ գործը ընդհատեց յանկարծ։

Փոլիսները փողոցում, դպրոցի ծառայի ձեռքից, երբ նա նոր էր դուրս եկել աւտրիական փաստատնից՝ խլեցին երկու նամակ Զաւարեանի հասցէով։ Ինչպէս վերջը իմացանք, այդ նամակների մէջ տաճիկ կառավարութեան դէմ ոչինչ չկար։ Սիմոնի գաղափարկիցներից մէկը գրում էր միայն ընդհանուր հարցերի շուրջը։

Սկսեցին խուզարկութիւնները, որի հետեւանքը եղաւ իմ անտարկութիւնը։ Տաճկական բանտ... բայց տեղը չէ այժմ խօսելու դրա մասին։ Կատարած հարցաքննութիւնից ինձ համար պարզ էր, որ Զաւարեանին բանտարկելու են. զգուշացրի նրան եւ խորհուրդ տի հեռանալ։

–Ինչ ուզում է լինի, բայց ես չեմ հեռանայ, պատասխանեց նա։

Եւ երբ մօտ երկու ամսայ բանտարկութիւնից յետոյ հիւանդութեան պատճառով ինձ տեղափոխեցին մի առանձին բանակարան՝ զափթիաների հսկողութեան տակ, չանցաւ մի քանի օր եւ բերին ինձ մօտ Զաւարեանին։

Սկսեց Զաւարեանի հարցաքննութիւնը. Մանրամասնութիւնները չեմ յիշում, միայն մի կէտ մնացել է իմ յիշողութեան մէջ եւ ես կը յիշատակեմ որպէս նմուշ տաճկական դատարանական հարցաքննութեան։

Զաւարեանը մի օր վերադարձաւ քննիչի մօտից ըստ երեւոյթին յուզած, բայց մշտական ժպիտը երեսին եւ պատմեց հետեւեալը։

–Դուք, էֆէնդիմ,– ասել է նրան քննիչը – պնդում էք, որ ոչ

մի կապ չունէք շարժումների հետ եւ եկել էք պարզ տեսչական պաշտօնով, բայց այժմ հետաքրքիր է՝ ի՞նչ բացատրութիւն կը տաք այս դօքիմանին, որը գտնւել է ձեզ մօտ եւ պարզապէս ապացուցում է ձեր մեղսակցութիւնը: Ահա, կարդացէք եւ տուէք ձեր բացատրութիւնը.

Զաւարեանը վերցնում է այդ սոսկալի դիքումանը եւ կարդում.

«Ահա ծագեց կարմիր արեւ
Տաք եւ պայծառ է օրը,
Դէ՛հ, քաշեցէք սիրուն եզներ
Առաջ տարէք արօրը»:

–Սա պարզ բանաստեղծութիւն է, շինականի երգը եւ սրա մէջ ոչ մի կասկածելի բան ես չեմ գտնում,– պատասխանում է Զաւարեանը:

–Ի՞նչպէս. դուք, ի հարկէ, ոչինչ չէք գտնի, իսկ մենք նրա համար ենք նշանակած ընդհանուր քննիչ, որ ամեն բան գտնեն եւ իմանանք: Ասացէք խնդրեմ – շարունակում է խորիմաստ քննիչը – այդ ի՞նչ արեւ է, այն էլ կարմիր, որ տաքացնում եւ պայծառացնում է օրը. սա պարզ յեղափոխութիւն քարոզել է նշանակում: Իսկ եզները, այն էլ սիրուն եզները, որ առաջ են տանում արօրը – մի՞թէ պարզ չէ, որ եզները բառի տակ ջան-ֆիտայիներ պիտի հասկանալ եւ այդ երգը ուղղած է մեր վեհափառ սուլթանի դէմ:

–Եթէ գտնում էք, որ օրէնքի տեսակէտից այս երգը իմ մեղսակցութիւնն է ապացուցում, շարունակեցէք ձեր քննութիւնը եւ այդ կէտն էլ մտցրէք ինձ յանձնելիք մեղադրական թղթի մէջ.– ասում է Զաւարեանը եւ քննութիւնը վերջանում է դրանով:

Եւ ի՞նչ էք կարծում. երկու ամսից յետոյ երբ յանձնեցին մեղադրական ակտը, Բաֆֆիի այդ բանաստեղծութիւնն էլ յիշատակւած էր նրա մէջ որպէս հիմունք Սիմոնի մեղադրութեան:

Վերջապէս հասաւ դատավարութեան օրը: Մենք, ի հարկէ, նախապէս որոշել էինք մեր բռնելիք դիրքը դատարանում: Նկատի առնելով, որ մեղադրութիւնը ամբողջապէս հիմնւած էր այնպիսի փաստաթղթերի վրայ, ինչպէս օրինակ ,Ահա ծագեց

կարմիր արեւե եւ այլն, մենք որոշեցինք ապացուցել միայն թէ որպիսի անհիմն ու երեխայական մեղադրանքներ է մեզ յայտնած եւ դրանից դուրս ուրիշ հարցեր չչօշափել։

Սակայն դատաւարութեան ընթացքում փոխուեց պատկերը։ Դատախազը իր մեղադրական ճառի մէջ խօսում էր վերին աստիճանի կրքոտ, բռնի խեղաթիւրում փաստերը եւ աղաւաղելով Սիմոնի ստացած նամակի մի քանի կէտերը՝ ճգնում էր ցոյց տալ, որ դատի ենթարկւածները պատկանում են այն կարգի մարդկանց, որոնց համար գոյութիւն չունի որ եւ է իրաւակարգ, օրէնք։

Նախագահի առաջարկութեամբ Սիմոնը պիտի տար իր բացատրութիւնը։ Հանգիստ, հասկանալի լեզուով նա սկսեց իր ճառը։

Թարգմանի միջոցով խօսում էր նա անհատի ազատութեան, ազգերի համերաշխ գործակցութեան, աշխատանքի հաւասար բաշխման եւ ընդհանրապէս արծարծում իր դաւանած գաղափարները։ Իր հայեցակէտները պարզելու համար պատմութիւնից եւ բնութեան երեւոյթներից վերցրած օրինակները ձեւակերպում էր այն աստիճանի պարզ լեզուով, որ խորամանկ նախագահը ըստ երեւոյթին կարծես համաձայնւում էր նրա հետ եւ յաճախ գլխի շարժումներով հաւանութեան նշաններ էր տալիս եւ ընդհատում։

–Փէ՛քի, փէ՛քի (լաւ, լաւ)։

Ես նկատեցի, որ Սիմոնը արդէն ոգեւորւած շատ առաջ է գնում, զգուշացրի նրան կարճ կտրելու, բայց ի զուր։

–Երբ իմ քարոզած իրաւակարգը մուտ գործի կեանքի մէջ, այն ժամանակ արդարադատութեան տաճարում այլ եւս չեն լինի պարն մեղադրողի նման դատախազներ,– այս խօսքերով Սիմոնը վերջացրեց իր ճառը։

Սրտատրոփ սպասում ենք դատարանի վճռին։

–Սիմէօն Զաւարեանը,– յայտարարում է նախագահը,– դատապարտւում է չորս տարի բերդարգելութեան, իսկ մնացած մեղադրեալները անպարտ են ճանաչւում։

Դատավճռից յետոյ անցաւ մի ամիս եւ ռուսաց դեսպանի պահանջմամբ Սիմոնը յանձնուեց Կովկասի իշխանութեան։

***

Անցան այդ օրից երկար տարիներ եւ Զաւարեանի գործունէութեան առաջ աւելի լայն ասպարէզներ բացուեցին։

Բացառիկ անձնուիրութեամբ բազմակողմանի կերպով նա ուսումնասիրեց իր սիրած ժողովրդի կեանքը եւ դարձաւ հայութեան ամենանուիրական իղձերի, ձգտումների մարմնացումը, նրա արդար դատի հարազատ մարտիկը։ Անտրտունջ, անխոով տարաւ իր ուսերի վրայ սիրած ժողովրդի ազատագրութեան նուիրական խաչը եւ մարտի դաշտում ընկաւ յոգնած, ուժասպառ։

Եւ համայն հայութիւնը ամենուրեք խորը կսկիծով ողբում է այսօր նրա անփոխարինելի կորուստը։

–Չէ, անզուգական հայրենասէր, դու չես մեռել, դու կենդանի ես մեր սրտերում։

Յ. Արղութեան

Զաւարեանի մայրը՝ որդու շիրիմին

Զաւարեան Մուշի մէջ

ՋԱՒԱՐԵԱՆԻ ԱՉՔԵՐԸ

«Աշխատանք», Վան. 20 Հոկտեմբեր 1913, Թիւ 49

Քրիստափոր Միքայէլեան քիչ մը թեք ինկած, յենած Ջաւարեանի ուսին, հայեացքը Երրորդին ուղղած՝ կանգներ է լուռ ու աստուածային:

Ջաւարեան յոգնած, գլուխը թեք ընկերոջ կուրծքին, նստած է յատիտենական *փալթօն* ուսերուն քաշած՝ ձեռները խաչաձեւ, ճակատը բաց ու պայծառ, աչքերը լի անմատչելի թախիծով ու սեւեռուն հայկական անյայտ Ապագային:

Լուսանկար մըն է ասիկա:

Բայց արձան մը աւելի շուտ, երկրպագութեան խնկելի սեղան մը ուր գեղեցկօրէն կը պայծառանան Դաշնակցութիւնը հիմնող ու դարբնող զոյգ Կամքերը - Միքայէլեան ու Ջաւարեան:

Միքայէլեան ինկաւ 1905-ին՝ Վիտօշի լեռնալանջին, երբ Ելտըզը կործանող ռումբի փորձը կ'ընէր:

Այսօր մեռած է Ջաւարեան, Ելտըզի ազատ պարիսպներուն տակ, անակնկալ ու կաթուածահար: Մեռած է Ջաւարեան, բայց իր աչքերը կը մնան ու կը պայծառանան հոս, այս նկարին մէջ:

Ջեմ տեսած զինք բայց ի՞նչ փոյթ, մի՞թէ հոգիները, մեծ հոգիները, լոկ տեսողութեամբ կըմբռնուին: Գիտէի որ Քրիստափորի հետ ու Քրիստափորէն ետք, Քրիստափորն էր ան Դաշնակցութեան համար: Ջեմ տեսած զինք – բայց ահա իր աչքերը, որոնք զինք պայծառօրէն կը բացատրեն՝ խորասուզուած հայկական բաղդին ու ճակատագիրին խորերը, ակնկալող հայկական լուսաշող Ապագան...

Իր աչքերը ջերմագին ու հրեշտակային, որոնք կրնան համակել, վառել, դարբնել հոգիները ու կազմել բանակներ՝ զոհաբերելու եւ ստեղծագործելու ընդունակ:

Ինծի համար աստուածային կայծեր են, գուրգուրանքի ու երկրպագութեան շողեր այդ աչքերը, եւ նկարը – Միքայէլեան ու Ջաւարեան, հայկական ապագայ պանթէոնի ամէնէն մեծաշուք ու հոյակապ արձանը աստուածային...

Ց. Վանեան

«Դրօշակ»-ի խմբագրատուն, Ժընեւ, 1904

ՍԻՄԷՕՆ ԶԱՒԱՐԵԱՆ. Կենսագրական Ակնարկ

«Աշխատանք», Վան. 20 Հոկտեմբեր 1913, Թիւ 49

Հեռագիրը Պոլսէն գուժեց ՀՅ Դաշնակցութեան վաղեմի վեթերան Սիմէոն Զաւարեանի մահը, 47 տարեկան հասակին մէջ։

Բօթի ազդեցութիւնը այնքան ուժեղ է, որ անկարելի է հաշտուիլ երէկուան մեր առաջնորդի կենսագրութիւնը գրելու տխուր դերին հետ։

Դժուար է ատիկա մանաւանդ այն պատճառով, որ Զաւարեանի կենսագրութիւնը գրել՝ կը նշանակէ գրել Դաշնակցութեան պատմութիւնը, որովհետեւ անիկա ոչ միայն կուսակցութեան հիմնադիրներէն մէկն է, այլեւ հիմնադրութեան օրէն մինչեւ մահուան ժամը անոր ազնուագոյն դրօշակակիրն եղաւ։

Չկայ կուսակցութեան մէջ խոշոր ձեռնարկ մը, ուր նա իր գործօն աջակցութիւնը բերած չըլլայ։ Անհնարին է գրել կենսագրական մանրամասնութիւններ նաեւ այն պատճառով, որ հոս կը պակսին չոր նիւթեր։

Թողելով կուսակցութեան պաշտօնական օրկանին, ինչպէս նաեւ կուսակցական թերթերուն տալ շահեկան մանրամասնութիւններ մեր այնքան սիրուած ընկերոջ մասին, մենք կը բաւականանանք միայն խոշոր գիծերով ներկայացնել այդ փայլուն դէմքը։ Զաւարեան Ռուսահայաստանի Ղազախ գաւառէն է. հայ ազնուական ընտանիքէ։ Ազնուական ընտանիքի մէջ ծնաւ ապագային ազնուականութեան դէմ պայքարելու համար։

Մէկ անգամ, կ՚ըսէր ան, իր ազնուական կոչումը պէտք եղած է իրեն, այն ալ՝ միմիայն բանտերու մէջ, որովհետեւ ռուսական օրէնքով ազնուականները մեծ դիւրութիւններ կը վայելեն բանտի մէջ։

Իր միջնակարգ կրթութիւնը ստացաւ Թիֆլիսի պետական գիմնազիոնի մէջ։ Պատանեկութիւնը եւ երիտասարդութիւնը անցուց ռուսական շրջանակներուն մէջ։ Իսկ այդ թուականներուն (1870-80) ռուս մտաւորականութիւնը բռնած էր լայն ժողովրդական ընկերվարական ուղղութիւն։

Այդ ժամանակ Ռուսիոյ մէջ, մասնաւորապէս՝ մտա-

տրականներու մէջ, տիրապետող յեղափոխական քաղաքական կուսակցութիւնը «Նարոդնայեա Վոլիա»-ն էր, որ ռուս յեղափոխական պատմութեան ոսկեդարը կը կազմէ։ Թերեւս ո՛չ մէկ ժողովրդական յեղափոխական կուսակցութիւն տուած չէ այնքան գաղափարական, այնքան անձնուէր ժողովրդասէր հերոսներ, որքան ռուսական «Նարոդնայեա Վոլիա»-ն։ Դուք անոր շարքերուն մէջ կը գտնէք ազնուական դասի որդիներ ու օրիորդներ, որոնք փախուստ տալով ընտանիքէ, փառահեղ դիրքերէ ու պաշտօններէ, իբրեւ հասարակ բանուոր, կօշկակար, հագուագիւտ անգամ ուսուցիչ ու հիւանդապահ կ՚երթային «Դէպի՛ ժողովուրդ»։

Դէպի ժողովուրդ... այդ էր ժամանակակից ռուս մտաւորականի իտէալը. դէպի՛ ժողովուրդ՝ լուսաւորելու, կըրթելու, կազմակերպելու եւ ըմբոստացնելու զայն իր դահիճներու, յաճախ հէնց իր ազնուական հայրերուն դէմ։ Եւ այս բոլորը՝ սարսափելի գնով։ Ապրելով ժողովուրդի մէջ, հագնելով անոր նման, ուտելով նրա կերածը եւ խօսելով անոր լեզուն։ Անոնց կենսագրութիւնը կարդացողը կարծես գործ ունի քրիստոնէութեան առաջին դարերու սուրբերուն հետ...

Ահա այսպիսի գաղափարական ու բարոյական մեծ մթնոլորտի մէջ սնաւ այն մարդը, որ հայկական աւելի դաժան կեանքի մէջ հանդիսացաւ նոյն անձնազոհ սուրբը, եւ որ այսօր յետին չքաւորութեան մէջ կնքեց իր մահկանացուն։

Դեռ գիմնազիոնի աշակերտական սեղանի վրայ՝ նա եղաւ անդամ «Նարոդնայեա Վոլիա»-ին եւ 7-րդ կարգին մէջ եղած ատեն բանտարկուեցաւ 7 ամիս՝ այդ կուսակցութեան պատկանելուն համար։

Զաւարեան իր համալսարանական ուսումը ստացաւ Փեթերսպուրկի «Ալեքսանդրեան ակադեմիա»-ի մէջ ուսանելով գիւղատնտեսութիւն։ Այդ համալսարանը վերջէն գոցուեցաւ ռուս կառավարութեան կողմէ, որովհետեւ յեղափոխականներ պատրաստեց։ Համալսարանի սեղանին վրայ նա եղաւ առաջնորդ ու իտէալը ամբողջ համալսարանի թէ՛ ռուս, թէ՛ լեհ, թէ՛ հրեայ եւ թէ՛ հայ ուսանողութեան։

Միջազգայնութեան կամ, աւելի ճիշդ, քոզմոփոլիթիզմի շրջանն էր։ Զաւարեան ոգեւորուած քոզմոփոլիթ էր։ Եւ խտրութիւն չէր դնէր ո՛չ հայի, ո՛չ ռուսի եւ ոչ ալ թուրքի միջեւ...

Համալսարանը աւարտեց 1890-ին փայլուն վկայականով

եւ ճամբորդեց Կովկաս՝ հայ երկրի մէջ տարածելու այն գիտութիւնը, զոր ստացած էր մայրաքաղաքին մէջ։

Փայլուն վկայականով հայրենիք դարձող երիտասարդը ո՛չ միայն չի մտածէր իր անձնական ապահովութեան մասին, այլ նաեւ իր մէջը խեղդած խորունկ գիտնականի միտքը՝ կը նետուի հասարակական յեղափոխական կեանքի մէջ։

Ով որ ծանօթ է Զաւարեանի ռուսերէն լեզուով լոյս ընծա-յած գիտական ուսումնասիրութիւններուն, որոնք հրատարակուած են ռուս կառավարութեան Կովկասի գիւղատնտեսական ընկ. կողմէ, ինչպէս՝ «Կովկասի անբերրրութեան պատճառները», ան կը համոզուի, որ ուրիշ ազգի մը եւ ուրիշ պայմաններու մէջ Զաւարեան կ՛ըլլար մեծ գիտնական մը. բայց հայկա-կան կեանքի մէջ, բանաստեղծի ըսածին պէս, «սուր, չի թող-նում, որ աշուղ դառնամ»։ Դառնալով Կովկաս՝ Զաւարեանի գործը կ՛ըլլայ հայերու մէջն ալ կազմակերպել «Նարոդնայեա Վոլիա»-ի մասնաճիւղեր։

Այդ ժամանակները, 1870-80ականներուն, Պալքանեան փոքր ազգերու ազատագրութեան, ռուս-թուրքական պատե-րազմներու օրերն էին, երբ դեռ նոր էր ծայր տուեր «Հայկական հարցը»։ Նոր սկսած էին խօսիլ թուրքահայ տառապանքի եւ անոր ազատագրութեան միջոցներուն մասին։

Ահա երկընտրանք մը՝ երիտասարդներու առջեւ։ Կա՛մ տարուիլ ռուսական համամարդկային հոսանքով, եւ կա՛մ նոյն գաղափարներով տոգորուած նուիրուիլ սեփական ժողովուրդի ազատագրման։ Հոս է, որ մեծ դեր կը կատարէ Զաւարեանի անբաժանելի ընկեր Քրիստափոր։ Թողունք, որ Զաւարեան ինք խօսի այդ մասին։ Քրիստափորին նուիրուած գրքոյկին մէջ. այսպէս կը գրէ Զաւարեան՝ ընկերական հաւաքոյթի մը մասին խօսելով. «Վէճը ազգայնութեան մասին էր, ցանկալի՞ է արդեօք, որ փոքրիկ ազգերը պահպանեն իրենց ազգա-յին գոյութիւնը, թէ՞ մարդկութեան շահի ու յառաջդիմութեան տեսակէտից աւելի լաւ է, որ նրանք ձուլուեն մեծերի հետ, ունենան մի համաշխարհային լեզու, մի գրականութիւն, յա-րաբերութեան մի բառարան։ Ես էլ միւս «կարմիրների» հետ տաք-տաք ապացուցում էի, որ յետադիմութիւն է ստեղծել մանր ու մունր գրականութիւններ, պահպանել առաջուց մեռե-լութեան դատապարտուած լեզուները»։

Միխայէլովը մեզ հետ թէեւ համամիտ չէր, բայց չէր

յարձակում, չէր տաքանում։ Վերջը միայն մի հարց տուեց նա.

-«Լա՛ւ, վերջը մի լեզու է լինելու, բայց մինչեւ այդ, ի՞նչ լեզուով են զարգանալու հայը, վրացին եւ այլ միլիոնաւոր բազմութիւններ, յանուն ո՞ր արդարութեան փոքրիկ ոչխարը պիտի չարածէ բնութեան այն արօտներում, ուր պտտում է եւ աւելի խոշոր տաւարը, յանուն ո՞ր արդարութեան։ Այս միտքն այն քան պարզ էր, որ մենք շփոթուեցինք եւ թէեւ վիճում էինք, բայց սրտներիս խորքում համակերպուեցինք անոր ճշմարտութեան հետ։ Հայ ժողովրդի մասին մտածելը մեզ համար դարձաւ նոյնչափ արդարացի, ինչ չափ եւ՝ ռուս գիւղացու մասին հոգալը»։

Եւ հայրենիքի տառապանքի ձայնը կը յաղթանակէ։ «Նարոդնայեա Վոլիա»-ի դրօշակին տակ կազմակերպուած հայ խմբակը կ՛որոշէ նուիրուիլ տաճկահայ դատին։ Այդ ժամանակ կազմուած էին նաեւ ուրիշ խմբակցութիւններ՝ նոյն նպատակով, ինչպէս՝ «Հայրենասէրներու խմբակը», «Հնչակեան խմբակ» եւ այլն։

Այդ բոլոր խմբակցութիւնները մկրտուած ըլլալով նոյն ռուս գաղափարական աւազանին մէջ, նուիրուած նոյն գաղափարին՝ կը մտադրեն միանալ մէկ դրօշակի տակ եւ գործել միացեալ ուժերով։ Ահա՛ այս միացեալ ուժէն է, որ առաջ կու գայ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որմէ դժբախտաբար մեծ մասամբ անձնա-կան պատճառներով կ՛անջատուի Հնչակեան կուսակցութիւնը եւ կը շարունակէ իր առանձին գործունէութիւնը։

Դաշնակցութիւնը կազմուած է արդէն. ռուսական «Դէպի ժողովուրդ» նշանաբանը մեզ մօտ կը փոխուի «Դէպի երկի՛ր» կոչին։

«Դէպի երկի՛ր» հայկական զրկանքները տեսնելու, դէպի երկի՛ր՝ ժողովուրդը ուսումնասիրելու, դէպի երկի՛ր՝ ժողովուրդը լուսաւորելու, դէպի երկի՛ր ժողովուրդը ըմբոստացնելու իր դահիճներուն դէմ։ Եւ ահա հայկական փլէադը։ Կուկունեան, Գոլոշեան, Պետօ, Մարտիկ (Հնչակեան), Մարգար վարժապետ եւ ուրիշներ...

Զաւարեան 91 թուին արդէն Տրապիզոն է, ազգային վարժարանի ուսուցիչ, բայց այդ լեկալ գործունէութեան համար Համիտեան ռեժիմը ասպարէզ չէր տար։ Մէկ քանի ամիսէն ետք Զաւարեան Տրապիզոնի բանտն է, ապա դատարանի առջեւ եւ յետոյ քշուած՝ Ռուսաստան։

Սամսոն, Երուանդ Համամճեան, Քրիստափոր,
Զաւարեան, Ռուբէն Տէր Ղեւոնդեան.
«Դրօշակ»-ի խմբագրատուն, Ժընեւ, 1904

Բայց հոն ալ հանգիստ չի մնար, հոն ալ՝ միշտ բանտ, միշտ աքսոր...

Ու այնուհետեւ կու գան հայկական սարսափի օրերը։ Յեղափոխական երիտասարդութիւնը կը պատրաստուի հակահարուածի։ Ահա՛ «Պանք օթոմանը», ահա՛ «Խանասորը», Զաւարեան երկուսի հոգին է...

90-ական լքման տարիները նա փոքրիկ խմբի հետ պատնէշի վրայ է՝ այս անգամ գրչով հայկական ռէակսիոնը վանելու համար։ «Դրօշակ»-ի [18]98, 99, 900 թիւերու մարտական լեզուն յայտնի է ընթերցողներուն։

903-ին մթնոլորտը կը փոխուի, Պուլկարիոյ մէջ գումարուած Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը նոր գործունէութեան ուրուագիծը կը պատրաստէ։ Մասսայական շարժումներու պատրաստութիւն՝ Սասունի, Վանի եւ Կիլիկիոյ մէջ։ Մեծ մարդասպանի դէմ դաւադրութիւն՝ Պոլսոյ մէջ։

Դերերը կը բաժնուին, հայդուկները հրացանները ձեռներնին՝ դէպի Մուշ, Վան։ Քրիստափորը եւ ընկերները ռումբը ձեռներնին՝ դէպի Պոլիս, իսկ Զաւարեան փրոփականդիստի գաւազան ձեռքը՝ դէպի Կիլիկիա։ Ի՞նչ պատահեցաւ Սասուն, Վան եւ Պոլիս, յայտնի է. բայց ի՞նչ եղաւ Կիլիկիա, այդ քիչերը իմացան։ Պէյրութի համալսարանի եւ ուրիշ քաղաքներու երիտասարդ ուսանողութիւնը գիտէ, թէ ի՛նչ եղաւ հոն։

Զաւարեան հոն անմիջական գործունէութեան (մասսայական շարժում) համար հող չգտաւ։ Եւ եկաւ այն եզրակացութեան, թէ տակաւին պէտք է ամէն բան այբուբենէն սկսել։ Հրացաններու հետ հոն փոխադրել տուաւ Բաֆֆիի գիրքերը։ Երկու տարուան գործունէութենէն ետք, որուն արդիւնքը եղաւ բազմաթիւ երիտասարդ ուժերու երեւան գալը, որոնք այսօր Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ լաւագոյն ուժերն են, Զաւարեան կը մեկնի Ժընեւ 1906 թուին, երբ արդէն սկսած էր կովկասեան յեղափոխական շարժումը եւ ապա՝ հայ-թուրքական ընդհարումները։ Այդ պատմութիւնը ամէնուն յայտնի է։

Այդ սեւ օրերուն, երբ «Կովկասեան վանդէան» մէկ կողմէ եւ երիտասարդ ուժերու լքումը միւս կողմէ՝ Կուսակցութիւնը դրած էին անելի մէջ, նորէն Զաւարեան եւ սակաւաթիւ ընկերներն են, որոնք չեն լքեր տաճկահայ դատը եւ կը պահպանեն թուրքահայ եւ ռուսահայ միութիւնը։

Ահա վերջապէս եւ 1908 թուի ազատութեան օրերը՝ Թուր-

քիոյ համար։ Զաւարեան դարձեալ ամէնէն առաջ հոն է, Պոլսոյ մէջ։ Նա էր, որ սկիզբ դրաւ ազատական ու հասարակական դասախօսութիւններու շարքին։ Նա էր, որ նախաձեռնարկը եղաւ «Ազատութեան մատենադարան»-ի հրատարակութեանց։ Ազատութեան օրերուն կը յաջորդեն Ատանայի կոտորածները։ Զաւարեանը դարձեալ հոն է. կը կազմակերպէ աղէտեալներու օգնութեան գործը եւ ջարդի պատճառներն ու հետեւանքները կ՛ուսումնասիրէ մեծ ձեռնհասութեամբ։

Այնուհետեւ կը տեսնենք զինք Մուշի մէջ թեմական տեսչի պաշտօնով։ Ընթերցողները կը յիշեն անշուշտ այն ոգեւորութիւնը, զոր անիկա առաջ բերաւ այդ շրջանին մէջ։ Բացուեցան 100-է աւելի վարժարաններ, որոնք ստացան բազմաթիւ գումարներ՝ հայկական գաղութներէն... Եւ այդ նպաստները կը տեղային Մուշ՝ Զաւարեանի անձնաւորութեան հանդէպ ուրիշներու ունեցած յարգանքին պատճառով։

Շատեր տեսան, թէ ի՜նչ պայմաններու տակ անիկա մեկնեցաւ Մուշէն, հալածուած՝ հաստափոր կղերականներէ եւ աղաներէ... մերկ ու գրպանը դատարկ, բայց հպարտ եւ մաքուր, այնքան մաքուր՝ դրամական հարցերու մէջ, որ անոր առջեւ կը խոնարհէին ո՛չ միայն ընկերներ, այլ՝ եւ հակառակորդները։

Եւ դարձեալ Պոլիս։ Նա էր, որ առաջին անգամ սկսաւ հարուածել Իթթիհատը «Ազատամարտ»-ի էջերուն մէջ խորապէս ազդուած այն խաբէական քաղաքականութենէն, որ Իթթիհատը ունեցաւ հայ ազգային պահանջներուն հանդէպ։ Նա միշտ մնաց հաւատարիմ ու անկեղծ իր ներքին զգացումներու առջեւ, անկաշառ՝ ի՛ր համոզումներուն մէջ, միշտ թարմ իր գաղափարականութեան մէջ, միշտ սիրող երիտասարդութիւնը եւ սիրուած անկէ, միշտ պահապան հրեշտակ՝ կուսակցութեան մաքրութեան ու առաջդիմութեան...

Եւ այժմ երբ կը յիշեմ անոր մարգարէական անէծքներն ու կոչերը մեր ընդհանուր ժողովներուն մէջ, երբ կը մտաբերեմ այն տիրական ազդեցութիւնը, զոր ունէր ան ամէնուն վրայ, կը յիշեմ եւ այն, որ ամէնքն ալ կը պնդէին, թէ Զաւարեանը բազմիցս փրկած է կուսակցութիւնը անկումներէ։

Կը յիշեմ ու կը մտածեմ, թէ ո՞վ պիտի ըլլայ այսուհետեւ մեր կուսակցութեան մարգարէն, անոր թերութիւնը անիծող Մովսէսը, բայց եւ միեւնոյն ատեն զայն դէպի Աւետեաց Երկիր առաջնորդողը՝ անփառունակ ու դաժան անապատներէ...



ԹԻՒ 1338 — 1913 — ԹԻՒ 1338

ԱԶԱՏԱՄԱՐՏ

ՕՐՔԹԵՐԹ

AZATAMART

Journal arménien quotidien

Rédaction AZATAMART Constantinople

հատը 10 փարա — հատը 10 փարա

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 15/28 ՀՈԿՏԵՄԲԵՐ — ՀԻՆԳ-ԵՎԱՐԴ Տ. ԲԻ — ԵՐԵՔՇԱԲԹԻ, 15/28 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ՍԻՄՈՆ ՉԱՒԱՐԵԱՆ

Երուանդ Համամճեան, Հայկ Օհանեան, Քրիստափոր, Ռուբէն Տէր Ղեւոնդեան. Զաւարեան, Սամսոն. Ժընեւ, 1904

Կը մտածեմ ու ծնկաչոք կը խոնարհիմ անոր աճիւններուն առջեւ, կը խոնարհիմ հաւատալով, որ այսուհետեւ ալ անոր ոգին մեզ պիտի ոգեւորէ, մեզ պիտի առաջնորդէ դէպի հեռաւոր իտէալները...

Կը մտածեմ եւ չեմ յուսահատիր, որովհետեւ երրորդութեան մէկ անդամը, հաստատուն կաղնին դեռ կանգուն է, եւ անոր արդէն շրջապատած են իր որդիներն ու թոռները...

Պիտի ապրինք դեռ եւ դե՛ռ շատ Զաւարեաններ պիտի տանք...

Պիտի ապրինք դեռ, մինչեւ որ հայ ժողովուրդը հասնի «Աւետեաց Երկիր»։

Իսկ մինչ այդ՝

Փա՜ռք ընկնողներուն...

Արամ

Արամ եւ Իշխան

ՄԱՐԳԱՐԷՆ. Սիմոն Զաւարեանի Անմեռ Յիշատակին

«Աշխատանք», Վան. 20 Հոկտեմբեր 1913, Թիւ 49

Զարկ, զա՛րկ, թո՛ղ բացուի ծանր դռնակը հողէ պատսպարանի...

Աշխարհը կործանուեցաւ քո պրոնզէ ոտքերուն տակ, կեանքը հալեցաւ քո պողպատէ բազուկներուն մէջ... եւ ունայնութիւնը խաւարի նման կը տարածուի անսահման տիեզերքի բոլոր կողմերը։

Զա՛րկ, զա՛րկ, պիտի բացուի դռնակը յաւիտենական։

Մարգարէ՛, կ'ըսեն որ դու չկաս այլեւս... Կ'ըսեն որ քո հիւծուած էութիւնդ ցամքած է իսպառ։ Կ'ըսեն թէ լռած է պատգամը քո դալկահար շրթունքներուն վրայ...։ Եւ ես ինչպէս Թովմաս անհաւատ, կ'ուզեմ մխել եղէգը քո կողին, որովհետեւ անհաւատ մըն եմ, նզովեալ անհաւատ մը։

Զա՛րկ, զա՛րկ դռնակը ցուրտ հիւղակի։

Մարգարէ՛, աշխարհի ունայնութիւնը կ'ոչնչանայ լոյսի ճաճանչներէն, եւ մահը կը սոսկայ ոգիի ժպիտներէն, եւ դու ով ոգի՛, ոգի լոյսի եւ ճշմարտութեան, ո՞վ տեսաւ քեզ, քո նիւթական գոյութիւնը որպէսզի վկայէ քո մահը։

Զանգը քո հոգու ղօղանջեց անվերջ սուրբ պատգամները մեծ ճշմարտութեան։ Սակայն աշխարհը կեղծիք, ստութիւն միայն երազեց։

Եւ երբ բազմամարդ փողոցներու մէջ, սիրոյ պատգամը կը հնչեցնէիր, հոն պատերու տակ շարքերով նստած դահիճները կը հրճուէին։ Խաւարը պատած էր անոնց աչքերը, յղփութիւնը ամուր ամուր գոցած էր անոնց ականջները. եւ դու ով ոգի, ո՛վ տեսաւ քեզ, որպէսզի վկայէ նոյնպէս քո մահը։

Եւ երբ անհուն խնդումով կը սաւառնէիր երկրէ երկիր, երգելով երգը մարդասիրութեան, հէնց այն ժամանակ ուժեղ, ահարկու, անկուշտ գայլի պէս կը կրծէ միսը անզօր տկարի։

Զա՛րկ, զա՛րկ, թող բացուի դուռը քար լռութեան։

Մարգարէ՛, կ'ըսեն թէ պատռած է քո սիրտը։ Ինչո՞ւ անհունութիւնը գեղեցկի ամբարեցի՛ր հոն, ինչո՞ւ սիրոյ ովկեանը հոն լեցուցիր, եւ բարիի տիեզերքը բովանդակեցիր. նեղ է.... նե՞ղ է եւ չդիմացան սիրտիդ հողէ պատերը, խախտ-

ւեցան անոր սիմերը ու ռամբի պէս պայթեցաւ անիկա, ցընցեց արար աշխարհը... իցի՜ւ թէ աշխարհը դիմանայ այդ ցնցումին։

Մարգարէ՛, կ'ըսեն ճամբորդ ես դու։

Ձա՛րկ, զա՛րկ դուռը հիւղակի եւ թող բացուին դռները սանտարամետի։ Կ'ըսեն թէ հոն է աղբիւրը ամէն չարութեան... հոն կը դարբնուի խաւարը աշխարհի... հոն կ'ամրանայ շըղթան որտութեան եւ հոն կը սրուի մանգաղը մահուան... կ'ըսեն թէ աստուածն անգամ անզօ՛ր պայքարի, անզօրութեան մէջ անիծեց զանոնք, գնաց քաշուեցաւ փոքրիկ պարտէզը բարիին, գեղեցկին։ Իջի՛ր Մարգարէ... իջի՛ր ահաւոր քո խարազանով, անխնայ փլցուր դժոխքը ահաւոր, քշի՛ր խաւարը, դուրս քաշի՛ր ոգին անհուն բարութեան, քանդի՛ր շղթան սուտի, կեղծիքի եւ ճշմարտութեան թեւերու վրայ աշխարհը դարձի՛ր։ Եւ կեանքը կորագլուխ իր մոլութեան մէջ, գուցէ այն ատեն իր մէջքը շտկէ, ուղիղ նայելու քո հուր աչքերուն։ Ո՞վ կարող է այժմ ուղիղ նայիլ ճշմարտութեան։

Մարգարէ՛, կ'ըսեն թէ դու մեռած ես. բայց ես անհաւատ եմ, ահաւոր եւ սարսափելի անհաւատ։

Ե՞րբ մեռած է լոյսը, ե՞րբ մեռած է ճշմարտութիւնը։

Եւ անհաւատ մըն եմ, թէկուզ եղէգը կողիդ մխեմ։

Իշխան

Մարգարէն. Իշխան

ՇԱՐԺԻՆՔ. Անզուգական Զաւարեանի Մահուան Առթիւ

«Աշխատանք», Իզմիր. 20 Նոյեմբեր 1913, Թիւ 46

Ելէ՛ք, շարժի՛նք, քալենք յառաջ,
Ո՛վ զաւակներ գաղափարի,
Սին ճառերով բազմահառաչ՝
Զանցնենք օրեր, ամիս, տարի,
Կամքը զմեզ պէտք է վարէ.
Ոտքի՛, ոտքի՛, հպարտ ճակտով
Մենք ձորերէ, կիրճէ, սարէ,
Դէպ ազատութիւն երթանք լուսով,
Ո՜հ, զինուորնե՛ր գաղափարի, սիրենք, խորհինք, կամինք ուժգին
Եւ քու անգին
Փառքիդ դիմենք, ո՛վ Հայաստան, մեր լոյսն աչքին։

Գաղափարը հայրենիքի
Զաւակներուն մէջ ստեղծեց
Մի լոյս հաւատք, վսեմ հոգի,
Եւ հին վէճերն բոլոր ցրուեց,
Իսկ դուն, ո՛վ կամք, պաշտելի՛ ոյժ,
Վառէ իսկոյն տկար սրտեր,
Եւ դարմանովդ ամենաբոյժ
Սրբէ-վէրքը հայուն անտէր,
Ո՜հ, զինուորնե՛ր գաղափարի, սիրենք, խորհինք, կամինք ուժգին
Եւ քու անգին
Փառքիդ դիմենք, ո՛վ Հայաստան, մեր լոյսն աչքին։

Մեզ դէպի պարտք կը տանի սէր,
Գաղափարը գիտակցութեան.
Իսկ կամքի ջիղն մեր մութ գիշեր
Փոխէ արագ պայծառ օրուան.
Սեան ու սուգը չ'ունին օգուտ,
Հիմա լացողն խեղճ է ու վատ,
Կ'ուզե՞նք ըլլալ մեծ ազգ մը շուտ,
Գործե՛նք, շարժի՛նք, օ՛ն, անվհատ։
Ո՜հ, զինուորնե՛ր գաղափարի, սիրենք, խորհինք, կամինք ուժգին
Եւ քու անգին
Փառքիդ դիմենք, ո՛վ Հայաստան, մեր լոյսն աչքին։

Վ. Արծրունի

Զաւարեան շիրիմը՝ Այգետհատ, Լոռի, Հ.Հ.

ՀՅԴ Հանրային Կապերու Գրասենեակ
2020